ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՀԱՇԻՎ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ակնարկ 2
1. Ընդհանուր վիճակագրական վերլուծություն 2
1.1. Վիճակագրական ընդհանուր տվյալներ 3
1.2 Վերլուծություն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների 3
1.3 Վերլուծություն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի 5
1.4 Վերլուծություն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների 7
1.5 Վերլուծություն ըստ հոսքերի 8
1.6 Վերլուծություն ըստ դասարանների խտության 9
2. Հարցաթերթիկի հարցերի վիճակագրական վերլուծություն 12
2.1 Ուսուցիչների մանկավարժական ստաժը (հարց 5-րդ) 12
2.2 Առարկայի դասավանդման համար շաբաթական հատկացված ժամաքանակը (հարց 6-րդ) 15
2.3 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակի փոփոխությունը նախորդ տարվա համեմատությամբ (հարց 7-րդ) 17
2.4 Լավագույն արդյունքի հասնելու համար ակնկալվող լրացուցիչ դասաժամերի քանակը (հարց 8-րդ) 19
2.5 «Որքանո՞վ եք համամիտ ստորև նշված մտքերի հետ» (հարց 9-րդ) 21
2.6 «Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները» (հարց 10-րդ) 26
3. Վերլուծություն ըստ հարցված ուսուցիչների կարևորած և նրանց աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնների 28
3.1 Գործոնների վերլուծության էությունը 28
3.2 Հարցման մասնակից ուսուցիչների կարևորած գործոնները 28
4. Մի քանի հարցերի պատասխանների միջև դիտարկված կապերը:
Կանխատեսում 34
Ամփոփում 41
Օգտագործված աղբյուրներ 43
Հավելված 44

Ընդհանուր ակնարկ

2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացված արտաքին գնահատմանը զուգընթաց այդ դասարաններում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդող ուսուցիչների շրջանում անցկացվել է հարցում, որին մասնակցել է արտաքին գնահատման ցանկում ընդգրկված հանրակրթական ուսումնական 66 հաստատություններից 57-ում հայոց լեզու դասավանդող 220 և 53 հաստատություններում հանրահաշիվ դասավանդող 180 ուսուցիչ (ընդհանուր թվով՝ 400):

Հարցման նպատակը եղել է հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության ուսումնասիրությունը և հարցված ուսուցիչների կարևորած մի քանի գործոնների (իր աշխատանքից ուսուցչի բավարարված լինելը, ուսուցիչների կողմից աշակերտներից ակնկալած գիտելիքների մակարդակը, առարկայի դասավանդման համար հատկացված շաբաթական ժամաքանակը, դասարանների խտությունը) և ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա դրանց ազդեցության վեր հանումը:

Ուսուցչի հարցաթերթիկը կազմված է եղել 10 հարցից, որոնք ներկայացված են հավելվածում[2]:

Հարցման արդյունքները SPSS և EXCEL ծրագրային փաթեթների կիրառմամբ ենթարկվել են ընդհանուր վիճակագրական և գործոնային վերլուծության:

1. Ընդհանուր վիճակագրական վերլուծություն

Հարցման արդյունքների ընդհանուր վիճակագրական վերլուծության մեջ ներկայացված են ընդհանուր վիճակագրական տվյալներ, տվյալներ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, ըստ բնակավայրերի տիպերի, ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների, ըստ հոսքերի և ըստ դասարաններում սովորող աշակերտների թվի:

1.1. Վիճակագրական ընդհանուր տվյալներ

Հարցման 400 մասնակիցներից 220-ը հայոց լեզվի ուսուցիչներ են, 180-ը՝ հանրահաշվի: Հայոց լեզվի ուսուցիչների 98.2%-ը և հանրահաշվի ուսուցիչների 87.2%-ը կազմել են կանայք: Հայոց լեզվի 220 ուսուցիչների դասավանդած 11-րդ դասարաններում, որոնցում ուսուցիչների հարցմանը զուգընթաց հայոց լեզվից անցկացվել է արտաքին գնահատում, սովորողների ընդհանուր թիվը կազմել է 3239 աշակերտ: Հանրահաշվի 180 ուսուցիչների դասավանդած և հանրահաշվի արտաքին գնահատմանը մասնակցած 11-րդ դասարանցիների թիվը կազմել է 3062 աշակերտ:

Հարցվածների 24.25%-ը դասավանդում է մայրաքաղաքի, 75.75%-ը՝ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Խոշոր քաղաքների հանրակրթական հաստատություններում դասավանդում է հարցված ուսուցիչների 41%-ը, միջին քաղաքների ուսումնական հաստատություններում 31%-ը, փոքր քաղաքներում՝ 22.25%-ը՝, գյուղերում՝ 4.25%-ը, բարձր լեռնային գյուղերում՝ 1.5%-ը: Նրանց 64.9%-ը դասավանդում է 37 ավագ դպրոցների, 22.8%-ը՝ 13 վարժարանների, 12.3%-ը՝ ոչ պետական 7 ուսումնական հաստատությունների բնագիտական, հումանիտար, ընդհանուր, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում: Ավագ դպրոցներից հարցմանը մասնակցել է հարցվածների 72.3%-ը, վարժարաններից՝ 23.3%-ը, ոչ պետական ուսումնական հաստատություններից՝ 4.4%-ը: Բնագիտական հոսքում դասավանդող ուսուցիչները կազմում են հարցվածների 22.8%-ը, հումանիտարում՝ 39.5%-ը, ընդհանուրում՝ 8.5%-ը, տնտեսագիտականում՝ 20.3%-ը, ֆիզիկամաթեմատիկական հոսքում՝ 7.9%-ը:

Հայոց լեզվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորը եղել է 6.6, ներքին գնահատման միջինը՝ 6.8, հանրահաշվինը, համապատասխանաբար՝ 4.1 և 6.5:

1.2 Վերլուծություն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 1-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են հարցման մասնակիցների վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Միջին միավորների սյունակներում գունավորած են ընդհանուր միջին միավորին գերազանցող կամ հավասար միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 1. Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատա-ածքային միավորը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման		Ներքին գնահատման	
			միջին միավորը	ստանդարտ շեղումը	միջին միավորը	ստանդարտ շեղումը
Հայոց լեզու						
Երևան	24.5	26.4	**7.0**	1.92	6.7	1.85
Սյունիք	10.4	11.4	**6.9**	1.74	5.9	3.05
Շիրակ	9.1	10.1	**7.0**	1.94	**7.5**	1.49
Լոռի	9.1	8.6	6.4	1.71	6.4	1.78
Արմավիր	9.1	8.9	6.0	2.01	**7.0**	1.56
Արագածոտն	6.8	5.9	6.4	1.71	6.3	1.71
Կոտայք	6.8	7.0	6.5	1.86	**7.6**	3.68
Գեղարքունիք	6.4	6.6	6.2	2.05	**7.3**	1.57
Վայոց ձոր	6.4	4.6	5.5	2.00	**7.3**	1.66
Արարատ	5.9	4.2	5.4	2.01	6.3	2.32
Տավուշ	5.5	6.3	**6.8**	2.03	**6.9**	1.75
Ընդամենը	**100**	**100**	**6.6**	**1.92**	**6.8**	**1.91**
Հանրահաշիվ						
Երևան	23.9	23.1	**4.8**	2.05	6.5	1.79
Շիրակ	12.8	11.4	**4.6**	2.00	**7.1**	1.65
Արմավիր	10.0	9.5	4.0	1.86	**6.6**	1.72
Կոտայք	9.4	9.3	4.1	1.81	6.5	1.77
Սյունիք	8.3	9.8	4.0	1.84	6.0	1.60
Գեղարքունիք	6.67	8.1	3.4	1.59	6.3	1.75
Արագածոտն	6.67	6.8	3.6	1.61	5.7	1.87
Արարատ	6.1	4.5	3.3	1.48	6.2	1.54
Տավուշ	5.56	6.0	3.9	1.57	**6.8**	1.66
Վայոց ձոր	5.56	4.2	3.8	1.75	**6.8**	1.57
Լոռի	5.0	7.2	**4.3**	1.92	6.4	1.49
Ընդամենը	**100**	**100**	**4.1**	**1.86**	**6.5**	**1.96**

Դիագրամ 1



Դիագրամ 2



Աղյուսակ 1-ից և դիագրամ 1-ից երևում է, որ հարցման մասնակից ուսուցիչների և 11-րդ դասարանում սովորող նրանց աշակերտների շուրջ քառորդ մասը Երևանից են:

Հայոց լեզվի արտաքին և ներքին գնահատման ընդհանուր միջին միավորների տարբերությունը 0.2 է, իսկ մաթեմատիկայինը՝ 2.4:

Հայոց լեզվի և՛ արտաքին, և՛ ներքին գնահատման ընդհանուր միջին միավորներից բարձր են Շիրակի և Տավուշի մարզերից հարցմանը մասնակցած ուսուցիչների աշակերտների միջին արդյունքները: Երևանի և Սյունիքի մարզի աշակերտների միջինները բարձր են միայն արտաքին գնահատման միջին միավորից, իսկ Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի աշակերտների միջինները՝ միայն ներքին գնահատման միջինից:

Հանրահաշվի արտաքին և ներքին գնահատման ընդհանուր միջին միավորից բարձր միջին արդյունքներով դարձյալ աչքի են ընկնում Շիրակի մարզից հարցմանը մասնակցած ուսուցիչների աշակերտները: Երևանի և Լոռու մարզի աշակերտների միջին միավորները գերազանցում են միայն արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորին, իսկ Արմավիրի, Տավուշի և Վայոց ձորի մարզերի աշակերտներինը՝ միայն ներքին գնահատման միջինին:

Հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատումից ամենացածր միջին արդյունք ունեն հարցմանը Արարատի մարզից մասնակցած ուսուցիչների աշակերտները:

1.3 Վերլուծություն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 2-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի: Միջին միավորների սյունակներում գունավորած են

ընդհանուր միջին միավորին գերազանցող կամ հավասար միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 2. Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Բնակավայրի տիպը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման	
			միջին միավորը	ստանդարտ շեղումը
Հայոց լեզու				
Խոշոր քաղաքներ	41.8	44.1	6.9	1.882
Միջին քաղաքներ	30.5	30.0	6.6	1.871
Փոքր քաղաքներ	22.7	21.1	6.2	2.014
Գյուղեր	3.6	2.6	5	1.958
Բարձր լեռնային գյուղեր	1.4	2.2	5.2	1.872
Ընդամենը	**100**	**100**	**6.6**	**1.960**
Հանրահաշիվ				
Խոշոր քաղաքներ	40.0	40.6	4.7	2.019
Միջին քաղաքներ	31.7	33.3	4.0	1.790
Փոքր քաղաքներ	21.7	21.0	3.7	1.672
Գյուղեր	5.0	2.8	3.7	1.613
Բարձր լեռնային գյուղեր	1.6	2.3	2.7	1.250
Ընդամենը	**100**	**100**	**4.1**	**1.909**

Հարցման բոլոր մասնակիցների 41%-ը դասավանդում է խոշոր քաղաքների, 31%-ը՝ միջին քաղաքների, 22.25%-ը՝ փոքր քաղաքների, 4.25%-ը՝ գյուղերի և 1.5%-ը՝ բարձր լեռնային գյուղերի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Դիագրամ 3



Դիագրամ 4



Աղյուսակ 2-ից և դիագրամ 4-ից երևում է, որ հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորներին գերազանցում են միայն խոշոր քաղաքների հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների միջին միավորները:

Ընդհանուր առմամբ, հայոց լեզվի և հանրահաշվի ընդհանուր միջին միավորներից ակնհայտորեն ցածր են հատկապես գյուղաբնակ աշակերտների միջին միավորները:

1.4 Վերլուծություն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների

Հարցումն անցկացվել է ավագ դպրոցներում, վարժարաններում և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների շրջանում:

Աղյուսակ 3-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների: Ընդհանուր միջին միավորին գերազանցող կամ հավասար միջին միավորների վանդակները գունավորած են:

Աղյուսակ 3. Վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների

Ուսումնական հաստատության տեսակը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման	
			միջին միավորը	ստանդարտ շեղումը
Հայոց լեզու				
Ավագ դպրոց	70.5	71.9	6.4	1.966
Վարժարան	25.4	25.8	7.2	1.821
Ոչ պետական ուսումնական հաստատություններ	4.1	2.3	6.9	1.888
Ընդամենը	100	100	6.6	1.960
Հանրահաշիվ				
Ավագ դպրոց	74.4	74.7	3.9	1.823
Վարժարան	20.6	22.7	5.0	1.913
Ոչ պետական ուսումնական հաստատություններ	5.0	2.6	3.8	2.193
Ընդամենը	100	100	4.1	1.909

Դիագրամ 5



Դիագրամ 6



Հարցված ուսուցիչների գերակշիռ մասը դասավանդում է ավագ դպրոցներում (72.25%): Վարժարաններում դասավանդողները կազմում են հարցվածների 23.25%-ը, ոչ պետական ուսումնական հաստատություններում դասավանդողները՝ 4.5%-ը:

Դիագրամ 6-ից երևում է, որ արտաքին գնահատումից ավագ դպրոցների աշակերտների հավաքած միջին միավորները 0.2-ական միավորով ցածր են համապատասխան ընդհանուր միջին միավորից: Վարժարանների դեպքում հակառակ պատկերն է. հայոց լեզվի միջին միավորը արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորից բարձր է 0.6-ով, հանրահաշվինը՝ 0.9-ով: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից հարցմանը մասնակցած ուսուցիչների աշակերտները հայոց լեզվից ունեն ավելի բարձր առաջադիմություն (ընդհանուր միջինից 0.3 միավորով բարձր), քան հանրահաշվից, որից նրանց հավաքած միջին միավորը ընդհանուր միջինից ցածր է 0.3 միավորով:

1.5 Վերլուծություն ըստ հոսքերի

Աղյուսակ 2-ում, որտեղ ըստ հոսքերի ներկայացված են հարցման մասնակիցների և նրանց աշակերտների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, երևում է, որ ուսուցիչների զգալի մասը դասավանդում է հումանիտար հոսքում (հայոց լեզվի ուսուցիչների 41.4%-ը և հանրահաշվի ուսուցիչների 37.2%-ը): Ֆիզիկամաթեմատիկական հոսքում դասավանդողները կազմել են հարցվածների ամենացածր տոկոսը (հայոց լեզվի ուսուցիչների 6.8%-ը, հանրահաշվի ուսուցիչների 8.9%-ը):

Աղյուսակ 4. Վիճակագրական տվյալներ ըստ հոսքերի

Առար-կան	Հոսքը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների տոկոսը	Արտաքին գնահատման	
				միջին միավորը	ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	Նշում չկա	1.4	0.7	3.3	1.09
	Բնագիտական	18.6	18.0	6.3	1.82
	Հումանիտար	41.4	43.0	6.6	1.98
	Ընդհանուր	10.4	10.2	6.3	2.11
	Տնտեսագիտական	21.4	22.7	**6.9**	1.82
	Ֆիզիկամաթեմատիկական	6.8	5.4	**6.7**	1.88
	Ընդամենը	**100**	**100**	**6.6**	**1.960**
Հանրահաշիվ	Նշում չկա	1.1	1.4	5.9	2.01
	Բնագիտական	27.8	16.5	**4.5**	1.70
	Հումանիտար	37.2	43.0	3.2	1.36
	Ընդհանուր	6.1	7.4	**4.2**	2.29
	Տնտեսագիտական	18.9	25.0	**5.3**	1.76
	Ֆիզիկամաթեմատիկական	8.9	6.7	**5.5**	1.98
	Ընդամենը	**100**	**100**	**4.1**	**1.909**

Աղյուսակ 4-ից երևում է, որ ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտական հոսքերի աշակերտները հայոց լեզվի հանրահաշվի արտաքին գնահատումից հավաքել են համապատասխան ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջիններ: Հայոց լեզվի դեպքում տարբերությունը կազմում է 0.1-0.3, հանրահաշվի դեպքում՝ 1.2-1.4 միավոր: Հայոց լեզվից ամենացածր միջին միավորները հավաքել են բնագիտական և ընդհանուր հոսքերում սովորող աշակերտները (ընդհանուր միջինից 0.3 միավորով պակաս), իսկ հանրահաշվից՝ հումանիտար հոսքում սովորողները (ընդհանուր միջինից 0.9 միավորով պակաս):

1.6 Վերլուծություն ըստ դասարանների խտության

Հարցված ուսուցիչների դասավանդած դասարանների խտությունը հետազոտվել է ըստ միջակայքերի (մինչև 5, 6-10, 11-15, 16-20, 21-25, 26 և ավելի աշակերտ): Հայոց լեզվի ուսուցիչների դասավանդած դասարանների միջին խտությունը կազմել է 19, մաթեմատիկայի ուսուցիչների դեպքում՝ 18 աշակերտ: Դասարանների միջին խտությունը հաշվարկված է զուտ աշակերտների թվի վերաբերյալ նշումների առկայությամբ հարցաթերթիկները հաշվի առնելով:

Դիագրամ 7-ում ըստ դասարանների խտության ներկայացված է հարցման մասնակիցների դասավանդած դասարանների տոկոսը, դիագրամ 8-ում՝ հայոց լեզվի և

հանրահաշվի արտաքին գնահատման միջին միավորները:

Դիագրամ 7



Դիագրանմ 7-ից երևում է, որ մեծ տոկոս են կազմում 11-25 աշակերտ ունեցող դասարանները (հայոց լեզվի 220 ուսուցիչների դասավանդած դասարանների 80.3%-ը և հանրահաշվի 180 ուսուցիչների դասարանների 78.4%-ը):

Դիագրամ 8



Դիագրամ 8-ում հստակ երևում է, որ երկու առարկայի դեպքում էլ համապատասխան ընդհանուր միջին միավորից զգալիորեն բարձր են մինչև 10 և 25-ից ավելի աշակերտ ունեցող դասարանների միջին միավորները: Այդ ցուցանիշները դիտարկվում են վարժարաններում և ավագ դպրոցների մի մասում: Ընդ որում, ամենաբարձր միջին միավոր ունեն մինչև 5 աշակերտ ունեցողները (ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարան, Վայքի քաղաքային վարժարան, «Կուպալյան» վարժարան, Կապանի թիվ 2 ավագ դպրոց):

Դիագրամ 9-ում ՀՀ վարչատարածքային միավորների կտրվածքով ներկայացված են ուսուցիչների թիվը և արտաքին գնահատման միջին միավորները ըստ դասարանների խտության:

Դիագրամ 9



Դիագրամ 10



Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների դիտարկումից երևում է, որ Երևանից և Շիրակի մարզից հարցմանը մասնակցած գրեթե բոլոր ուսուցիչների դասարանները, անկախ առարկայից և դասարանի խտությունից, արտաքին գնահատումից ունեցել են ընդհանուր միջինից բարձր միջին արդյունքներ:

Հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից զգալիորեն բարձր են Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի մարզերի՝ 21-30 աշակերտ ունեցող դասարանների և Վայոց ձորի մարզի՝ մինչև 5 աշակերտ ունեցող մեկ դասարանի միջին արդյունքները: Հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից այս կամ այն չափով ցածր են Արարատի և Արմավիրի մարզերի՝ ըստ դասարանների խտության բոլոր խմբերի, Վայոց ձորի մարզի՝ 10-ից ավելի աշակերտ ունեցող դասարանների, Արագածոտնի և Սյունիքի մարզերի 11-15, Լոռու մարզի 11-20, Կոտայքի և Արագածոտնի մարզերի 20-ից ավելի և Շիրակի մարզի 25-ից ավելի աշակերտ ունեցող դասարանների միջին արդյունքները:

Հանրահաշվի արդյունքները հիմնականում բարձր են (կամ հավասար) Սյունիքի և Տավուշի մարզերից հարցվածների՝ մինչև 15 աշակերտ ունեցող դասարաններում,

Արագածոտնի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերի 16-20, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի 21-25 աշակերտ ունեցող դասարաններում: 25 և ավելի աշակերտ ունեցող դասարաններում հանրահաշվից բարձր միջին միավորներ են արձանագրվել Լոռու, Արմավիրի և Կոտայքի մարզերում: Ըստ դասարանների խտության հանրահաշվի ընդհանուր միջինից զգալիորեն ցածր են Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերի աշակերտների միջին արդյունքները: Արարատի մարզում ընդհանուր միջին միավորից 0.1-ով բարձր է միայն 11-15 խտության խմբի մեկ դասարանի միջին միավորը: Սյունիքի, Արարատի և Տավուշի մարզերի՝ 15-ից ավելի աշակերտ ունեցող դասարանների աշակերտների միջին արդյունքները զգալիորեն զիջում են հանրահաշվի ընդհանուր միջին միավորին:

Երկու առարկաներից էլ 20-ից ավելի աշակերտ ունեցող դասարաններում սովորողների ցուցաբերած ամենացածր միջին արդյունքները դիտարկվել են առավելապես գյուղերի, մասամբ էլ՝ միջին և փոքր քաղաքների դպրոցներում: Քաղաքներում հանրահաշվից ամենացածր միջին արդյունքներ ունեն ավագ դպրոցների՝ 20-ից ավելիաշակերտ ունեցող դասարանները:

2. Հարցաթերթիկի հարցերի վիճակագրական վերլուծություն

Հարցաթերթիկի հարցերի վիճակագրական վերլուծությունն անդրադառնում է 5-10-րդ հարցերին, քանի որ 1-4-րդ հարցերի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները զետեղված են «Հարցման արդյունքների ընդհանուր վիճակագրական վերլուծություն» բաժնում:

2.1 Ուսուցիչների մանկավարժական ստաժը (հարց 5-րդ)

Հարցման մասնակիցների 23.75%-ն ունի մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ, 6.25%-ը՝ 6-10, 7.5%-ը՝ 11-15, 15.25%-ը՝ 16-20, 12.5%-ը՝ 21-25, 16.5%-ը՝ 26-30, 8.5%-ը՝ 31-35, 6.25%-ը՝ 36-40, 3.5%-ը՝ ավելի քան 40 տարվա ստաժ: Հայոց լեզվի ուսուցիչների միջին մանկավարժական ստաժը կազմել է 20.9, մաթեմատիկայինը՝ 24.4 տարի:

Դիագրամ 11



Դիագրամ 11-ում ըստ մանկավարժական ստաժի ներկայացված են հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների

տոկոսները, դիագրամ 12-ում՝ հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատումից նրանց աշակերտների հավաքած միջին միավորները:

Դիագրամ 12



Դիագրամ 11-ում ըստ մանկավարժական ստաժի ներկայացված են հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տոկոսները, դիագրամ 12-ում՝ հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատումից նրանց աշակերտների հավաքած միջին միավորները: Դիագրամներից երևում է, որ ուսուցիչների մանկավարժական ստաժի հետ կապված՝ ***հայոց լեզվի*** միջին միավորների էական տարբերություն չի դիտարկվել: Դիագրամ 12-ից երևում է, որ հայոց լեզվի ընդհանուր միջին միավորին ամենաշատը գերազանցում է (0.3 միավորով) 36-40 տարվա ստաժ ունեցող ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորը:

Մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցողների աշակերտների հավաքած միջին միավորը հավասար է ընդհանուր միջինին:

Այլ պատկեր է ***հանրահաշվի*** ուսուցիչների դեպքում: Հանրահաշվի ընդհանուր միջին միավորից բարձր են 11-25, 31-35 և ավելի քան 40 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների աշակերտների միջին միավորները (0.1-1.3 միավորով): Տարբերությունն ակնհայտ է 11-15 և ավելի քան 40 տարվա ստաժ ունեցողների դեպքում (համապատասխանաբար՝ 1.3 և 1.1 միավոր): Ընդ որում, հարցվածներից ստաժի այդ խմբերի ուսուցիչները 14-ն են, որոնցից 6 ուսուցիչ 11-15 տարվա ստաժով (հանրահաշվի ուսուցիչների 3.3%-ը), 8-ը՝ ավելի քան 40 տարվա (4.4%-ը): 11-15 և ավելի քան 40 տարվա ստաժ ունեցողների աշակերտները միջինում հավաքել են համապատասխանաբար՝ 5.4 և 5.2 միավոր («Քվանտ» և «Ֆոտոն» վարժարաններ, Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց, Երևանի թիվ 94, Կապանի թիվ 2 և Իջևանի ավագ դպրոցներ):

Հայոց լեզվից ամենացածր միջին արդյունք (5.7) ունեն ավելի քան 40 տարվա ստաժ ունեցող հարցվածների աշակերտները, հանրահաշվից՝ 6-10 և 26-30 տարվա ստաժ ունեցողներինը (համապատասխանաբար՝ 3.8 և 3.7 միավոր):

Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների դիտարկումը ցույց է տալիս, որ Երևանից և Շիրակի մարզից հարցմանը մասնակցած ուսուցիչների դասարաններում, անկախ առարկայից և ուսուցչի մանկավարժական ստաժից, արտաքին գնահատման միջին միավորները գերակշիռ մեծամասնությամբ բարձր են ընդհանուր միջին միավորից:

Մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցողներից բարձր արդյունքներ են ցուցաբերել Տավուշի, Կոտայքի և Սյունիքի մարզերի ***հայոց լեզվի*** ուսուցիչների աշակերտները: Բացի Շիրակի մարզից, մյուս մարզերի (Արագածոտնի, Կոտայքի, Արմավիրի, Վայոց ձորի, Սյունիքի) 6-15 տարվա ստաժ ունեցող հայոց լեզվի ուսուցիչների աշակերտները արտաքին գնահատումից հավաքած միջին միավորներով

զիջում են ընդհանուր միջինին: Մարզերում 16-20 տարվա ստաժ ունեցող հարցվածներից (Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի մարզեր) ընդհանուր միջինին գերազանցող միջին միավորներ են հավաքել Տավուշի, Կոտայքի և Սյունիքի ուսուցիչների աշակերտները: 21-25 տարվա ստաժ ունեցողների աշակերտները լավ արդյունքներ ունեն Լոռու և Սյունիքի մարզերում, 26-30 տարվանը՝ Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի, 31-35 տարվանը՝ Շիրակի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Լոռու, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերից հարցմանը մասնակցած ուսուցիչների մեջ չկան 35 տարուց ավելի մանկավարժական ստաժ ունեցող հայոց լեզվի ուսուցիչներ: 35-40 տարվա ստաժով ուսուցիչների աշակերտներն ընդհանուր միջինից բարձր արդյունքներ են ցուցաբերել Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի և Տավուշի մարզերում: Հարցվածների մեջ ավելի քան 40 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչներ կան միայն Երևանից և Գեղարքունիքի մարզից: Նրանց աշակերտների միջին միավորները 1.2-1.4-ով ցածր են ընդհանուր միջին միավորից:

Ինչպես նշվել է վերևում, հարցմանը Երևանից և Շիրակի մարզից մասնակցած գրեթե բոլոր ***հանրահաշվի*** ուսուցիչների աշակերտներն ունեն ընդհանուր միջին միավորին գերազանցող միջին արդյունքներ: Այդպիսին են նաև Սյունիքի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերից մինչև 5 տարվա ստաժ ունեցող մասնակիցների աշակերտների միջին արդյունքները: Գեղարքունիքի, Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերից հարցմանը մասնակցածների մեջ չկան 6-15 տարվա ստաժով հանրահաշվի ուսուցիչներ: Բարձր միջին միավորներ ունեն Շիրակի և Տավուշի մարզերի՝ 6-15 տարվա մանկավարժական ստաժ ունեցողների աշակերտները: Ընդհանուր միջինից բարձր միջին միավորներ են հավաքել Շիրակի, Լոռու, Կոտայքի, Արմավիրի, Սյունիքի մարզերի 16-20 տարվա, Կոտայքի և Սյունիքի մարզերի 21-25 տարվա, Շիրակի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի 26-30 տարվա, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի 31-35 տարվա, Լոռու և Սյունիքի մարզերի 35-40 տարվա ստաժ ունեցող հանրահաշվի ուսուցիչների աշակերտները: Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերից հարցմանը մասնակցած հանրահաշվի ուսուցիչների մեջ չկան 35 տարուց ավելի ստաժ ունեցողներ: 40 տարուց ավելի ստաժով ուսուցիչներ կան Երևանից, Տավուշի և Սյունիքի մարզերից հարցվածների մեջ, որոնցից առաջին երկուսի աշակերտները հանրահաշվի արտաքին գնահատումից հավաքել են ընդհանուր միջին միավորին 1.9-2.9-ով գերազանցող միջին միավորներ:

2.2 Առարկայի դասավանդման համար շաբաթական հատկացված ժամաքանակը (հարց 6-րդ)

«Շաբաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում Ձեր դասավանդած առարկայի ուսուցմանը: (Տարբեր հոսքերում դասավանդելու պարագայում նշել յուրաքանչյուր հոսքի դասաժամերի քանակը)» հարցը հարցաթերթիկում 6-րդն է:

Հարցման մասնակիցների 7.25%-ը նշել է, որ դասավանդում է շաբաթական 2 դասաժամով, 18.25%-ը՝ 3, 11.25%-ը՝ 4, 12.75%-ը՝ 5, 8.5%-ը՝ 6, 9.25%-ը՝ 7, 15.25%-ը՝ 8, 2.25%-ը՝ 9, իսկ 15.25%-ը որևէ պատասխան չի նշել:

Դիագրամ 13-ում ներկայացված են հարցման մասնակից ուսուցիչների տոկոսները ըստ հատկացված ժամաքանակի:

Քանի որ տարբեր հոսքերի համար նախատեսված ժամաքանակը տարբեր է, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում տվյալ առարկայի շաբաթական ժամաքանակին կարող է հատկացվել լրացուցիչ դասաժամ, ըստ այդմ հարցի պատասխաններում դիտարկվել է 2-9 ժամ:

Դիագրամ 13



Դիագրամ 14



Դիագրամ 13-ից երևում է, որ հայոց լեզու դասավանդողների 58.6%-ը նշել է 4-7 դասաժամ, հանրահաշիվ դասավանդողների 28.9%-ը՝ 3, 27.2%-ը՝ 8: Շաբաթական 3 ժամով հանրահաշիվ դասավանդողների գերակշիռ մասը դասավանդում է հումանիտար հոսքում: Շաբաթական 8 ժամ նշած ուսուցիչները հանրահաշիվ են դասավանդում տնտեսագիտական, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում:

Դիտարկելով միջին միավորների պատկերը (դիագրամ 14)՝ նկատում ենք, որ ընդհանուր միջին միավորից տարբերությունները նկատելի են հանրահաշվի դեպքում: Հայոց լեզվից ամենաբարձր միջին միավոր ունեն շաբաթական 3 ժամով դասավանդողների (7.7%) աշակերտները, որոնց գերակշիռ մասը սովորում է հումանիտար հոսքում:

Ընդհանուր միջինից 0.4-2 միավորով բարձր են շաբաթական 5, 8 և 9 դասաժամով հանրահաշիվ ուսումնասիրող աշակերտների միջին միավորները: Շաբաթական 5

դասաժամով ուսումնասիրողները առավելապես բնագիտական հոսքից են (կան նաև տնտեսագիտական, ֆիզմաթ և ընդհանուր հոսքերից), 8 և 9 ժամով ուսումնասիրողները՝ տնտեսագիտական (նաև բնագիտական և ֆիզմաթ հոսքերից):

Ընդհանուր միջին միավորից 0.4-1 միավորով ցածր են շաբաթական 2-4, 6 և 7 դասաժամով հանրահաշիվ ուսումնասիրող աշակերտների միջին միավորները: 2-4 դասաժամով ուսումնասիրողներն առավելապես հումանիտար հոսքից են, մյուսները՝ բնագիտական և ֆիզմաթ հոսքերից: 2-4 դասաժամով հանրահաշիվ դասավանդող ուսուցիչները (հանրահաշվի ուսուցիչների 28.9%-ը և նշված ժամաքանակով դասավանդողների 71.2%-ը), դասավանդում են շաբաթական 3 դասաժամով և, ինչպես նշվել է վերևում, գերակշիռ մեծամասնությամբ աշխատում են հումանիտար հոսքի աշակերտների հետ:

Հարցման մասնակից հայոց լեզվի ուսուցիչների 41.4%-ը և հանրահաշվի ուսուցիչների 37.2%-ը դասավանդում են հումանիտար հոսքում: Բնագիտական հոսքում դասավանդող հայոց լեզվի ուսուցիչների 34.1-ական տոկոսը դասավանդում է շաբաթական 2 և 4 ժամով, հումանիտար հոսքում դասավանդողների 34.1%-ը՝ 7 ժամով, ընդհանուր հոսքում դասավանդողների 30.4%-ը և տնտեսագիտական հոսքում դասավանդողների 31.9%-ը՝ 5 ժամով, ֆիզիկամաթեմատիկական հոսքում դասավանդողների 33.3%-ը՝ 7 ժամով:

Բնագիտական հոսքի հանրահաշվի ուսուցիչների 42%-ը դասավանդում է շաբաթական 5 ժամով, հումանիտար հոսքում դասավանդողների 70.1%-ը՝ 3 ժամով, ընդհանուր հոսքում դասավանդողների 45.5%-ը՝ 4 ժամով, տնտեսագիտական հոսքում դասավանդողների 67.6%-ը և ֆիզիկամաթեմատիկական հոսքում դասավանդողների 62.5%-ը՝ 7 ժամով:

Հայոց լեզվի արտաքին գնահատումից բնագիտական և ընդհանուր հոսքերում սովորող աշակերտների հավաքած միջին միավորները հիմնականում ցածր են ընդհանուր միջին միավորից (6.6-ից): Վերջինից զգալիորեն բարձր է ընդհանուր հոսքում դասավանդողների աշակերտների միջին միավորը (8.2): Այդ ուսուցիչները դասավանդում են շաբաթական 4 ժամով: Հումանիտար հոսքում ընդհանուր միջին միավորին գերազանցում են շաբաթական 2-4 ժամով դասավանդողների աշակերտների միջին միավորները: Դրանցից ամենաբարձրը շաբաթական 4 ժամով դասավանդող ուսուցիչների (հարցված հայոց լեզվի ուսուցիչների 11.8%-ը) աշակերտների միջին միավորն է (7.0): Ընդհանուր միջին միավորից բարձր են նաև տնտեսագիտական հոսքում շաբաթական 3-6 ժամով և ֆիզիկամաթեմատիկական հոսքում 2, 4 և 5 ժամով հայոց լեզու դասավանդողների աշակերտների միջին միավորները (6.7-7.5): Ընդհանուր հաշվով հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից 0.1 կամ 0.2 միավորով բարձր են շաբաթական 3, 4 և 6 ժամով դասավանդող ուսուցիչների աշակերտների միջին միավորները:

Հանրահաշվի արտաքին գնահատումից հումանիտար հոսքում սովորողների հավաքած միջին միավորները ընդհանուր միջին միավորից (4.1) ցածր են 0.8-1.3 միավորով: Ընդհանուր միջին միավորին 0.4-1.5 միավորով գերազանցում են ընդհանուր

հոսքում միայն շաբաթական 4 և 5 ժամով դասավանդող ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորները: Ընդհանուր միջինին 1.1-2.9-ով գերազանցում են տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում դասավանդողների աշակերտների միջին միավորները: Այդ հոսքերում շաբաթական 8 և 9 ժամով մաթեմատիկա դասավանդողների աշակերտների միջին միավորները 5.2-7 են:

Ընդհանուր առմամբ հանրահաշվի ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորներ ունեն շաբաթական 5, 8 և 9 ժամով դասավանդող ուսուցիչների աշակերտները (ֆիզիկամաթեմատիկական, տնտեսագիտական, ընդհանուր հոսքեր):

2.3 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակի փոփոխությունը նախորդ տարվա համեմատությամբ (հարց 7-րդ)

«Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը» հարցի հնարավոր պատասխաններն են՝ «Բավականին բարելավվել է», «Քիչ է բարելավվել», «Չի փոխվել», «Նվազել է»: «Բավականին բարելավվել է» պատասխանն ընտրել է բոլոր հարցվածների 29%-ը, «Քիչ է բարելավվել» պատասխանը՝ 48.25%-ը, «Չի փոխվել» պատասխանը՝ 15.75%-ը, «Նվազել է» պատասխանը՝ 2.75%-ը, իսկ 4.25%-ը որևէ պատասխան չի նշել:

Աղյուսակ 5-ում ըստ առարկաների ներկայացված են հարցաթերթիկի 7-րդ հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և նրանց աշակերտների հավաքած միջին միավորները: Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 5

Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը			
Առար-կան	**Պատասխանը**	**Ուսուցիչների տոկոսը**	**Աշակերտների միջին միավորները**
Հայոց լեզու	Պատասխան չկա	3.2	6.1
	Բավականին բարելավվել է	35.9	6.8
	Քիչ է բարելավվել	45.0	6.5
	Չի փոխվել	12.7	6.4
	Նվազել է	3.2	6.3
	Ընդամենը	**100**	**6.6**
Հանրահաշիվ	Պատասխան չկա	5.6	4.3
	Բավականին բարելավվել է	20.6	4.9
	Քիչ է բարելավվել	52.2	4.2
	Չի փոխվել	19.4	3.5
	Նվազել է	2.2	4.1
	Ընդամենը	**100**	**4.1**

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, որ երկու առարկաների դեպքում էլ ամենամեծ թվով ուսուցիչները նշել են «Քիչ է բարելավվել» պատասխանը: Այդ առումով երկրորդ տեղում է «Բավականին բարելավվել է» պատասխանը, երրորդում է «Չի փոխվել» և չորրորդում՝ «Նվազել է» պատասխանը:

Երկու առարկայի դեպքում էլ «Բավականին բարելավվել է» պատասխանն ընտրածների աշակերտների միջին միավորները բարձր են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից և թերևս ամենաբարձրն են: Ուսման մակարդակը բարելավված համարելու նվազմանը զուգընթաց նվազում են հայոց լեզվից աշակերտների հավաքած միջին միավորները: Այդ միտումը փոքր-ինչ խախտվում է հանրահաշվի դեպքում. «Չի փոխվել» պատասխանն ընտրածների աշակերտները հավաքել են ամենացածր միջին միավորը (3.5), իսկ «Նվազել է» պատասխանն ընտրածներինը հավասար է հանրահաշվի ընդհանուր միջին միավորին (4.1):

Հայոց լեզվի ուսուցիչների 35.9%-ը նշել է «Բավականին բարելավվել է» պատասխանը, 45%-ը՝ «Քիչ է բարելավվել», 12.7%-ը՝ «Չի փոխվել», 3.2%-ը՝ «Նվազել է», իսկ 3.2%-ը պատասխան չի նշել: Բնագիտական հոսքում դասավանդողներից 7-րդ հարցին պատասխանած բոլոր ուսուցիչների աշակերտների՝ արտաքին գնահատումից հավաքած միջին միավորները ցածր են ընդհանուր միջին միավորից: Բոլոր հոսքերում (բացի բնագիտականից) «Բավականին բարելավվել է» պատասխանը նշածների աշակերտների միջին միավորները բարձր են հայոց լեզվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորից: Ընդ որում, շոշափելի բարձր է ֆիզիկամաթեմատիկական հոսքի աշակերտների միջին միավորը (7.6): «Քիչ է բարելավվել» պատասխանն ընտրածների դեպքում բարձր են (0.3-ով) ընդհանուր և տնտեսագիտական հոսքերում դասավանդողների աշակերտների միջին միավորները: Ընդհանուր միջինից ցածր են բնագիտական և ընդհանուր հոսքերում դասավանդողներից «Չի փոխվել» պատասխանն ընտրածների աշակերտների միջին միավորները: Ուսման մակարդակի փոփոխություն չնկատած ուսուցիչների դեպքում բարձր միջին միավորներով դարձյալ աչքի է ընկնում ֆիզիկամաթեմատիկական հոսքը («Ֆոտոն» վարժարան, միջին միավորը 8.2): «Նվազել է» պատասխանն ընտրածներից ընդհանուր և տնտեսագիտական հոսքերում դասավանդողների աշակերտների միջին միավորները (համապատասխանաբար՝ 7.4 և 6.8) բարձր են ընդհանուր միջին միավորից: Այդ պատասխանն ընտրած ուսուցիչները Երևանի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններից են:

Հանրահաշվի ուսուցիչների 20.6%-ը համարում է, որ ուսման մակարդակը բավականին բարելավվել է, 52.2%-ի կարծիքով այն քիչ է բարելավվել, 19.4%-ի կարծիքով՝ չի փոխվել, 2.2%-ի կարծիքով նվազել է, իսկ 5.6%-ը որևէ պատասխան չի նշել: Հումանիտար հոսքում դասավանդողներից 7-րդ հարցին պատասխանած բոլոր ուսուցիչների աշակերտները արտաքին գնահատումից հավաքել են ընդհանուր միջինից ցածր միջին միավորներ: «Բավականին բարելավվել է» և «Քիչ է բարելավվել»

պատասխաններն ընտրածներից միայն հումանիտար հոսքում դասավանդողների աշակերտներն են ընդհանուր միջին միավորից ցածր միջին միավորներ հավաքել, իսկ տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերի աշակերտների միջին միավորները նկատելիորեն բարձր են (4.4-5.7): «Չի փոխվել» պատասխանն ընտրածների դեպքում ընդհանուր միջին միավորին գերազանցում են միայն տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում դասավանդողների աշակերտների միջին միավորները (5.3-6.1 միավոր՝ «Ֆոտոն» և «Քվանտ» վարժարաններ, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարան, Արմավիրի թիվ 4, Երևանի թիվ 43 և Գավառի ավագ դպրոցներ): «Նվազել է» պատասխանն ընտրածներից միայն բնագիտական և տնտեսագիտական հոսքերում դասավանդող ուսուցիչների աշակերտների միջին միավորներն են գերազանցում ընդհանուր միջին միավորին (համապատասխանաբար՝ 5.1 և 5.7): Այդ պատասխանն ընտրած ուսուցիչները դասավանդում են մայրաքաղաքի, Լոռու և Վայոց ձորի մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

2.4 Լավագույն արդյունքի հասնելու համար ակնկալվող լրացուցիչ դասաժամերի քանակը (հարց 8-րդ)

«Լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ քանի՞ դասաժամի անհրաժեշտություն եք զգում» հարցի պատասխանների վերլուծությունից երևում է, որ բոլոր հարցվածների 62%-ը լրացուցիչ դասաժամի ավելացման անհրաժեշտություն չի տեսնում, 5.75%-ը գտնում է, որ ցանկալի է մեկ դասաժամով ավելացումը, 22%-ը՝ 2, 5%-ը՝ 3, 5.25%-ը՝ 4 և ավելի դասաժամով:

Աղյուսակ 6-ում ըստ առարկաների ներկայացված են 8-րդ հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և արտաքին գնահատումից նրանց աշակերտների հավաքած միջին միավորները: Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 6

Ակնկալվող լրացուցիչ ժամաքանակը			
Առար-կան	Ակնկալվող ժամերի թիվը	Ուսուցիչների տոկոսը	Աշակերտների միջին միավորները
Հայոց լեզու	0	61.4	6.6
	1	10.0	6.3
	2	18.2	6.9
	3	4.1	6.4
	4 և ավելի	6.3	6.1
	Ընդամենը	**100**	**6.6**

Հանրահաշիվ	0	62.78	4.8
	1	0.55	5.1
	2	26.67	4.9
	3	6.1	3.5
	4 և ավելի	3.9	2.8
	Ընդամենը	**100**	**4.1**

Աղյուսակ 6-ից երևում է, որ երկու առարկաների ուսուցիչներն էլ մեծամասամբ լրացուցիչ դասաժամի ավելացման անհրաժեշտություն չեն տեսնում: Հայոց լեզվի ուսուցիչների 38.6%-ը և հանրահաշվի ուսուցիչների 37.2%-ը շաբաթական հատկացված դասաժամերի ավելացման կարիք ունեն (հիմնականում 2 ժամով): Հայոց լեզվի դասավանդման համար լրացուցիչ դասաժամ ակնկալողների 47.1%-ի և հանրահաշվի դեպքում՝ 71%-ի համար ցանկալի է 2 ժամով ավելացումը: Ընդ որում, նրանցից հայոց լեզվի ուսուցիչները հիմնականում դասավանդում են հումանիտար հոսքում, հանրահաշվինը՝ տնտեսագիտական և բնագիտական հոսքերում:

Լրացուցիչ դասաժամերի անհրաժեշտություն տեսնող ***հայոց լեզվի*** ուսուցիչների աշակերտների միջին միավորները հիմնականում ցածր են ընդհանուր միջին միավորից (6.6-ից): Այս ուսուցիչներից միայն 10%-ի աշակերտների միջին միավորներն են ընդհանուր միջին միավորից բարձր, ընդ որում, զգալիորեն բարձր է նրանցից 10-ի աշակերտների միջին միավորը (7.4): Այս ուսուցիչները, որոնք դասավանդում են Երևանի թիվ 2, Կապանի թիվ 2 և թիվ 9, Վաղարշապատի թիվ 5 ավագ դպրոցներում և Վայքի քաղաքային վարժարանում, նշել են, որ դասավանդում են շաբաթական 7 դասաժամով, և որ ցանկալի է ևս 2 դասաժամով ավելացումը: Հայոց լեզվից բարձր առաջադիմություն ցուցաբերած նրանց բոլոր աշակերտները սովորում են հումանիտար հոսքում:

Հանրահաշվի արտաքին գնահատման միջին միավորից բարձր միջիններ դիտարկվում են առավելապես շաբաթական 5 և ավելի դասաժամով դասավանդող և լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չտեսնող ուսուցիչների աշակերտների շրջանում: Լրացուցիչ դասաժամերի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչների աշակերտների միջին միավորները հիմնականում ցածր են ընդհանուր միջին միավորից (4.1-ից): Այս ուսուցիչներից միայն 3%-ի աշակերտների միջին միավորներն են ընդհանուր միջին միավորից բարձր, ընդ որում, նշանակալի բարձր է նրանցից միայն 4-ի աշակերտների միջին արդյունքը: Այս ուսուցիչները դասավանդում են Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցում, «Եվրասիա միջազգային համալսարան» ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում, Գյումրու ՀՊՏՀ մասնաճյուղի հենակետային և «Ֆոտոն» վարժարաններում: Նրանք նշել են, որ դասավանդում են շաբաթական 8 դասաժամով (միայն «Եվրասիա միջազգային համալսարանի» հումանիտար հոսքում՝ 2 ժամով), և կա լրացուցիչ ևս 1 կամ 2 դասաժամի անհրաժեշտություն: Բարձր առաջադիմություն ցուցաբերած նրանց աշակերտները սովորում են հումանիտար, ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտական հոսքերում:

Հատկացված դասաժամերի ավելացման կարիք չունեցողներից միայն մայրաքաղաքի, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերի ***հայոց լեզվի*** ուսուցիչների աշակերտներն են արտաքին գնահատումից հավաքել ընդհանուր միջինին գերազանցող միջին միավորներ, լրացուցիչ 1 ժամ ակնկալողներից՝ միայն Շիրակի, Կոտայքի և Սյունիքի մարզերինը, 2 ժամ ակնկալողներից՝ Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերինը և Երևանինը: Երկուսից ավելի դասաժամի ավելացում ակնկալող ուսուցիչների աշակերտները հիմնականում հավաքել են ընդհանուր միջինից ցածր միջին միավորներ: Բացառություն են կազմում մայրաքաղաքի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերից հարցված մի քանի ուսուցիչների աշակերտները:

Հատկացված դասաժամերն ավելացնելու անհրաժեշտություն չտեսնող ***հանրահաշվի*** ուսուցիչներից միայն Արարատի և Վայոց ձորի մարզերի ուսուցիչների աշակերտներն են արտաքին գնահատումից ցուցաբերել ընդհանուր միջին միավորից ցածր միջին արդյունքներ: Լրացուցիչ 1 կամ 2 ժամ ակնկալողները Երևանից, Կոտայքի, Շիրակի և Արագածոտնի մարզերից են: Բացի վերջինից, մյուս երեք վարչատարածքային միավորների ուսուցիչների աշակերտներն ունեն բարձր միջին միավորներ:

Լրացուցիչ 2 ժամ ակնկալող ուսուցիչների մեծ մասը դասավանդում է հումանիտար հոսքում. հայոց լեզվի դեպքում՝ բոլոր 2 ժամ ակնկալողների 75%-ը (նրանք կազմում են հումանիտար հոսքում դասավանդողների 33%-ը), հանրահաշվի դեպքում՝ 89.8%-ը (հումանիտար հոսքում դասավանդողների 65.7%-ը): Երկուսից ավելի ժամ ակնկալող ուսուցիչներ կան բոլոր վարչատարածքային միավորներից, ընդ որում, նրանց աշակերտները հիմնականում ցուցաբերել են ընդհանուր միջինից զգալիորեն ցածր միջին արդյունքներ:

2.5 «Որքանո՞վ եք համամիտ ստորև նշված մտքերի հետ» (հարց 9-րդ)

9.1) Աշխատավարձը բավարար է:
9.2) Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ:
9.3) Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են:
9.4) Դպրոցը բավարարում է սովորողների և նրանց ծնողների կրթական պահանջները:

9.1 Աշխատավարձը բավարար է: Հարցման բոլոր մասնակիցների 3.25%-ը աշխատավարձը միանգամայն բավարար է համարում, 13.5%-ը՝ գրեթե բավարար, 19.75%-ը շատ քիչ է համամիտ այդ մտքի հետ, 62.5%-ը բոլորովին համամիտ չէ, 1%-ը որևէ պատասխան չի նշել:

Աղյուսակ 7-ում ըստ առարկաների ներկայացված են 9.1 հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական

տվյալներ և նրանց աշակերտների հավաքած միջին միավորները: Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 7

Աշխատավարձը բավարար է			
Առար-կան	**Պատասխանը**	**Ուսուցիչների տոկոսը**	**Աշակերտների միջին միավորները**
Հայոց լեզու	Պատասխան չկա	1.4	7.0
	Միանգամայն համամիտ եմ	2.7	6.3
	Գրեթե համամիտ եմ	12.3	6.9
	Շատ քիչ եմ համամիտ	19.5	6.4
	Բոլորովին համամիտ չեմ	64.1	6.6
	Ընդամենը	**100**	**6.6**
Հանրահաշիվ	Պատասխան չկա	0.6	4.4
	Միանգամայն համամիտ եմ	3.9	3.8
	Գրեթե համամիտ եմ	15.0	4.4
	Շատ քիչ եմ համամիտ	20.0	4.0
	Բոլորովին համամիտ չեմ	60.6	4.2
	Ընդամենը	**100**	**4.1**

Աղյուսակ 7-ից երևում է, որ ուսուցիչների գերակշիռ մասը համամիտ չէ «Աշխատավարձը բավարար է» մտքի հետ: Արտաքին գնահատումից նրանց աշակերտների հավաքած միջին միավորներն ավելի բարձր են, քան այդ մտքի հետ «միանգամայն համամիտ» ուսուցիչներինը: Վերջինների աշակերտների միջին միավորներն ամենացածրն են (հայոց լեզվից՝ 6.3, հանրահաշվից՝ 3.8): Երկու առարկայից էլ ամենաբարձր միջին միավոր են հավաքել «Գրեթե համամիտ եմ» պատասխանն ընտրածների աշակերտները (հայոց լեզվից՝ 6.9, հանրահաշվից՝ 4.4):

Աշխատավարձը միանգամայն բավարար համարող հայոց լեզվի ուսուցիչները Երևանից, Շիրակի և Կոտայքի մարզերից են: Վերջին երկուսի դեպքում աշակերտների միջին միավորները ցածր են ընդհանուր միջին միավորից: Ընդհանուր առմամբ, անկախ 9.1 մտքի վերաբերյալ նշած պատասխանից, ընդհանուր միջինից բարձր է միայն Երևանի ուսուցիչների աշակերտների միջին միավորը: «Բոլորովին համամիտ չեմ» պատասխանը նշածներից մայրաքաղաքի, Շիրակի, Արագածոտնի և Սյունիքի մարզերի ուսուցիչների աշակերտներն են հայոց լեզվի արտաքին գնահատումից բարձր միջին միավորներ հավաքել:

Աշխատավարձը միանգամայն բավարար համարող հանրահաշվի ուսուցիչները Շիրակի, Արմավիրի և Կոտայքի մարզերից են: Շիրակի և Արմավիրի մարզերի այդ ուսուցիչների աշակերտների միջին միավորները բարձր են ընդհանուր միջին միավորից: «Բոլորովին համամիտ չեմ» պատասխանն ընտրածներից ընդհանուր միջինին գերազանցող միջին միավորներ ունեն Երևանի, Շիրակի, Սյունիքի, Արմավիրի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերից հարցվածների աշակերտները:

9.2 Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ: Հարցման բոլոր մասնակիցների 57.75%-ն իր աշխատանքը միանգամայն հետաքրքիր և տարաբնույթ է համարում, 36.5%-ը գրեթե համամիտ է այդ մտքի հետ, 4%-ը շատ քիչ է համամիտ: «Բոլորովին համամիտ չեմ» պատասխանը ոչ-ոք չի ընտրել, իսկ 1.75%-ը որևէ պատասխան չի նշել:

Աղյուսակ 8-ում ըստ առարկաների ներկայացված են 9.2 հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և նրանց դասավանդած աշակերտների հավաքած միջին միավորները: Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 8

Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ			
Առար-կան	**Պատասխանը**	**Ուսուցիչների տոկոսը**	**Աշակերտների միջին միավորները**
Հայոց լեզու	Պատասխան չկա	1.8	5.2
	Միանգամայն համամիտ եմ	62.3	6.5
	Գրեթե համամիտ եմ	31.8	6.9
	Շատ քիչ եմ համամիտ	4.1	6.0
	Ընդամենը	**100**	**6.6**
Հանրահաշիվ	Պատասխան չկա	1.7	3.5
	Միանգամայն համամիտ եմ	52.2	4.2
	Գրեթե համամիտ եմ	42.2	4.2
	Շատ քիչ եմ համամիտ	3.9	4.4
	Ընդամենը	**100**	**4.1**

Աղյուսակ 8-ից երևում է, որ վերոհիշյալ մտքի հետ «Գրեթե համամիտ» հայոց լեզվի ուսուցիչների աշակերտները հավաքել են ամենաբարձր միջին միավորը՝ 6.9: Հանրահաշվից ամենաբարձր միջին արդյունք ունեն այդ մտքի հետ «Շատ քիչ համամիտ» ուսուցիչների աշակերտները՝ 4.4:

«Միանգամայն համամիտ եմ» պատասխանը նշածներից միայն Երևանի, Շիրակի և Սյունիքի մարզերի ուսուցիչների աշակերտներն ունեն ընդհանուր միջինից բարձր միջին արդյունքներ: Այս պատասխանն ընտրած ուսուցիչները դասավանդում են հումանիտար, ընդհանուր, բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում: «Գրեթե համամիտ եմ» պատասխանածներից միայն Գեղարքունիքի (ընդհանուր և բնագիտական հոսքեր), Արմավիրի (հումանիտար, բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքեր) և Վայոց ձորի (հումանիտար, բնագիտական և ընդհանուր հոսքեր) ուսուցիչներն ունեն ընդհանուր միջինին զիջող միջին միավորներ:

Ընդհանուր միջինից բարձր միջին միավորներ ունեն մայրաքաղաքի, Շիրակի, Լոռու, Արարատի և Կոտայքի մարզերից «Միանգամայն համամիտ եմ» պատասխանն ընտրած ուսուցիչների աշակերտները: Երևանից և Շիրակի մարզից հարցվածներից այս

պատասխանն ընտրածները դասավանդում են բոլոր հոսքերում, Լոռու մարզից՝ հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական, Արարատի մարզից՝ բնագիտական, Կոտայքի մարզից՝ հումանիտար, բնագիտական և տնտեսագիտական հոսքերում: «Գրեթե համամիտ եմ» պատասխանածներից Երևանի, Շիրակի, Սյունիքի, Արմավիրի և Կոտայքի մարզերի ուսուցիչների աշակերտները, որոնք սովորում են հիմնականում հումանիտար, բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում, ունեն ընդհանուր միջինից բարձր միջին միավորներ:

9.3 Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են: Հարցման մասնակիցների 73.25%-ը միանգամայն համամիտ է նշված մտքի հետ, 23.75%-ը գրեթե համամիտ է, 1.75%-ը շատ քիչ է համամիտ, 0.5%-ը բոլորովին համամիտ չէ, 0.75%-ը որևէ պատասխան չի նշել:

Աղյուսակ 9-ում ներկայացված են 9.3 հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և արտաքին գնահատումից նրանց աշակերտների հավաքած միջին միավորները: Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 9

Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են			
Առար-կան	**Պատասխանը**	**Ուսուցիչների տոկոսը**	**Աշակերտների միջին միավորները**
Հայոց լեզու	Պատասխան չկա	0.9	5.1
	Միանգամայն համամիտ եմ	75.5	6.6
	Գրեթե համամիտ եմ	21.4	6.5
	Շատ քիչ եմ համամիտ	1.4	6.1
	Բոլորովին համամիտ չեմ	0.9	7.5
	Ընդամենը	**100**	**6.6**
Հանրահաշիվ	Պատասխան չկա	0.6	3.4
	Միանգամայն համամիտ եմ	70.6	4.1
	Գրեթե համամիտ եմ	26.7	4.2
	Շատ քիչ եմ համամիտ	2.2	5.2
	Ընդամենը	**100**	**4.1**

Աղյուսակ 9-ից երևում է, որ երկու առարկայի դեպքում էլ ուսուցիչների գերակշիռ մասը համարում է, որ աշակերտների և ծնողների հետ հարաբերությունները լավ են: «Բոլորովին համամիտ չեմ» պատասխանն ընտրել է հայոց լեզվի ուսուցիչների 0.9%-ը, իսկ հանրահաշվի ուսուցիչներից ոչ-ոք այդ պատասխանը չի ընտրել: Հայոց լեզվից ամենաբարձր միջին միավորը (7.5) հավաքել են հենց այս պատասխանն ընտրած ուսուցիչների աշակերտները: Հանրահաշվի ընդհանուր միջին միավորից բարձր են

«Գրեթե համամիտ եմ» և «Շատ քիչ եմ համամիտ» պատասխանն ընտրածների աշակերտների հավաքած միջին միավորները (համապատասխանաբար՝ 4.2 և 5.2):

9.4 Դպրոցը բավարարում է սովորողների և նրանց ծնողների կրթական պահանջները: Հարցման մասնակիցների 62%-ը միանգամայն համամիտ է նշված մտքի հետ, 27.75%-ը գրեթե համամիտ է, 5.75%-ը շատ քիչ է համամիտ, 1.5%-ը բոլորովին համամիտ չէ: Որևէ պատասխան չի նշել հարցվածների 3%-ը:

Աղյուսակ 10-ում ներկայացված են 9.4 հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և նրանց աշակերտների հավաքած միջին միավորները: Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 10

Դպրոցը բավարարում է աշակերտների և ծնողների կրթական պահանջները			
Առար-կան	**Պատասխանը**	**Ուսուցիչների տոկոսը**	**Աշակերտների միջին միավորները**
Հայոց լեզու	Պատասխան չկա	3.6	6.0
	Միանգամայն համամիտ եմ	60	6.6
	Գրեթե համամիտ եմ	27.3	6.6
	Շատ քիչ եմ համամիտ	6.8	6.5
	Բոլորովին համամիտ չեմ	2.3	6.6
	Ընդամենը	**100**	**6.6**
Հանրահաշիվ	Պատասխան չկա	2.2	3.9
	Միանգամայն համամիտ եմ	64.4	4.1
	Գրեթե համամիտ եմ	28.3	4.4
	Շատ քիչ եմ համամիտ	4.4	3.5
	Բոլորովին համամիտ չեմ	0.6	4.2
	Ընդամենը	**100**	**4.1**

Աղյուսակ 10-ից երևում է, որ համամիտ լինելու աստիճանի նվազմանը զուգընթաց նվազում է նաև ուսուցիչների տոկոսը: Հայոց լեզվից հավաքած միջին միավորները առավելապես հավասար են ընդհանուր միջին միավորին, իսկ հանրահաշվի միջինները մեծամասամբ բարձր են (կամ հավասար): Միայն «Շատ քիչ եմ համամիտ» պատասխանն ընտրածների աշակերտներն են հանրահաշվից ցածր միջին միավոր հավաքել:

«Դպրոցը բավարարում է աշակերտների և ծնողների կրթական պահանջները» մտքի հետ միանգանմայն համամիտ ուսուցիչներից միայն Շիրակի, Տավուշի մարզերում և Երևանում հարցված ուսուցիչների աշակերտների միջին միավորներն են գերազանցում ընդհանուր միջին միավորին: Այդ ուսուցիչները դասավանդում են հետազոտության մեջ ընդգրկված բոլոր հոսքերում: Ընդհանուր միջին միավորից բարձր են նաև «Գրեթե համամիտ եմ» պատասխանն ընտրածներից Շիրակի և Սյունիքի մարզերից հարցված ուսուցիչների աշակերտների միջին արդյունքները: «Բոլորովին համամիտ չեմ»

պատասխանած ուսուցիչները Երևանից, Շիրակի և Վայոց ձորի մարզերից են: Երևանցի ուսուցիչների աշակերտները սովորում են հումանիտար հոսքում և արտաքին գնահատումից ցուցաբերել են ընդհանուր միջին միավորից բարձր միջին արդյունք: Շիրակի մարզից «Բոլորովին համամիտ չեմ» պատասխանն ընտրած ուսուցիչները դասավանդում են տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում, Վայոց ձորի մարզից՝ բնագիտական հոսքում: Հայոց լեզվի արտաքին գնահատումից նրանց աշակերտների հավաքած են միջին միավորները ցածր են ընդհանուր միջին միավորից:

«Միանգամայն համամիտ եմ» պատասխանն ընտրածներից Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արարատի, Վայոց ձորի մարզերից և Երևանից հարցվածների աշակերտների միջին միավորները բարձր են ընդհանուր միջին միավորից: Երևանից և Շիրակի մարզից «Միանգամայն համամիտ եմ» պատասխանն ընտրածները դասավանդում են հետազոտված բոլոր հոսքերում, Սյունիքի մարզից՝ բոլոր հոսքերում, բացի հումանիտարից, Վայոց ձորի մարզից հարցվածները՝ հումանիտար, բնագիտական և տնտեսագիտական, Արարատի մարզից հարցվածները՝ հումանիտար և բնագիտական հոսքերում: Բարձր են նաև Շիրակի (հումանիտար, բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքեր), Արմավիրի (բնագիտական և տնտեսագիտական), Կոտայքի (տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական), Վայոց ձորի (հումանիտար և ընդհանուր) մարզերից և Երևանից (բոլոր հոսքերը, բացի բնագիտականից) «Գրեթե համամիտ եմ» պատասխանն ընտրած ուսուցիչների աշակերտների միջին միավորները: «Շատ քիչ եմ համամիտ» պատասխանն ընտրածներից միայն Սյունիքի մարզի ուսուցիչների աշակերտներն են բարձր միջին արդյունքներ ցուցաբերել (տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքեր):

2.6 «Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները» (հարց 10-րդ)

Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝ «Հիմնականում արդարացրել են», «Մասամբ են արդարացրել», «Չեն կարողացել արդարացնել», «Դժվարանում եմ պատասխանել»: Հարցման բոլոր մասնակիցների 21.75%-ը համարում է, որ նախորդ ուսումնական տարում աշակերտները հիմնականում արդարացրել են ուսուցիչների ակնկալիքները, 69.25%-ի կարծիքով մասամբ են արդարացրել, 3.5%-ի կարծիքով չեն արդարացրել, իսկ 3.5%-ը դժվարացել է պատասխանել: Հարցվածների 2%-ը որևէ պատասխան չի նշել:

Աղյուսակ 11-ում ներկայացված են 10-րդ հարցին հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների տված պատասխանների վերաբերյալ վիճակագրական տվյալներ և նրանց աշակերտների հավաքած միջին միավորները:

Գունավորած են ընդհանուր միջինից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 11

Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները			
Առար-կան	**Պատասխանը**	**Ուսուցիչների տոկոսը**	**Աշակերտների միջին միավորները**
Հայոց լեզու	Պատասխան չկա	1.8	7.3
	Հիմնականում արդարացրել են	25.5	7.0
	Մասամբ են արդարացրել	65.0	6.5
	Չեն կարողացել արդարացնել	2.7	5.9
	Դժվարանում եմ պատասխանել	5.0	6.0
	Ընդամենը	**100**	**6.6**
Հանրահաշիվ	Պատասխան չկա	2.2	4.4
	Հիմնականում արդարացրել են	17.2	5.0
	Մասամբ են արդարացրել	74.4	4.1
	Չեն կարողացել արդարացնել	4.4	3.4
	Դժվարանում եմ պատասխանել	1.7	2.9
	Ընդամենը	**100**	**4.1**

Աղյուսակ 11-ից երևում է, որ հայոց լեզվի ուսուցիչների 65%-ը և հանրահաշվի ուսուցիչների 74.4%-ը համարում են, որ աշակերտները մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները:

Ակնկալիքների արդարացման աստիճանին համամիտ լինելու նվազմանը զուգընթաց նվազում են նաև միջին միավորները: Ամենաբարձր միջին միավորներ են հավաքել «Հիմնականում արդարացրել են» պատասխանն ընտրած ուսուցիչների աշակերտները (հայոց լեզվից՝ 7, հանրահաշվից՝ 5):

«Հիմնականում արդարացրել են» պատասխանն ընտրածներից միայն Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի ուսուցիչների աշակերտների միջին միավորներն են զիջում ընդհանուր միջինին: Ընդ որում, Արարատի մարզի ուսուցիչները դասավանդում են հումանիտար և ընդհանուր հոսքերում, իսկ Արմավիրինը և Վայոց ձորինը՝ բնագիտականում: «Չեն կարողացել արդարացնել» պատասխանն ընտրած ուսուցիչները Սյունիքի, Արմավիրի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերից և Երևանից են: Նրանց բոլորի աշակերտների միջին միավորները զիջում են ընդհանուր միջին միավորին: Սյունիքի մարզում ուսուցիչների ակնկալիքները չարդարացրած աշակերտները սովորում են տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում, Կոտայքի մարզում՝ հումանիտարում, Երևանում, Արմավիրի և Վայոց ձորի մարզերում՝ բնագիտական հոսքերում:

«Հիմնականում արդարացրել են» պատասխանն ընտրած հանրահաշվի ուսուցիչների աշակերտներից միայն Գեղարքունիքի (հումանիտար և տնտեսագիտական հոսքեր) և Կոտայքի (հումանիտար և բնագիտական հոսքեր) մարզերում են ընդհանուր

միջինից ցածր միջին միավոր հավաքել: «Չեն կարողացել արդարացնել» պատասխանն ընտրած ուսուցիչները Լոռու (հումանիտար հոսք), Սյունիքի (հումանիտար և բնագիտական հոսքեր), Արմավիրի (տնտեսագիտական հոսք) մարզերից են, և նրանց բոլորի աշակերտների միջին միավորները ցածր են ընդհանուր միջին միավորից:

3. Վերլուծություն ըստ հարցված ուսուցիչների կարևորած և նրանց աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնների

3.1 Գործոնների վերլուծության էությունը

Գործոնների վերլուծության միջոցով հնարավոր է վեր հանել դիտարկվող փոփոխականների միջև առկա գծային վիճակագրական կորելյացիաների համար պատասխանատու «ծպտյալ» փոփոխականները:

Գործոնների վերլուծությունը բազմաչափ է: Դրա օգնությամբ դիտարկումների հետ կապված առկա մեծաթիվ փոփոխականները բերվում են ավելի փոքրաթիվ անկախ փոփոխականների, որոնք կոչվում են ***գործոններ***: Ընդ որում, յուրաքանչյուր գործոն միավորում է միմյանց հետ խիստ փոխկապակցված փոփոխականները: Տարբեր գործոններում միավորված փոփոխականները միմյանց հետ թույլ փոխկապակցվածություն են ունենում:

Այսպիսով՝ գործոնների վերլուծության նպատակն է այնպիսի համակարգված գործոնների վերհանումը, որոնք առավել լիարժեքորեն կբացատրեն առկա փոփոխականների միջև դիտարկվող կապերը:

3.2 Հարցման մասնակից ուսուցիչների կարևորած գործոնները

Ուսուցչի հարցաթերթիկի հարցերը ենթարկվել են գործոնային վերլուծության, որի հիման վրա ի հայտ են եկել 4 գործոններ, որոնք հիմնականում անմիջական դիտարկմամբ չեն երևում, սակայն այս կամ այն չափով կարևորվում են հարցված ուսուցիչների կողմից և ազդում են ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա:

① ***Առաջին գործոնի*** հետ սերտորեն կապված են 5-րդ հարցը («Մանկավարժական ստաժը») և 9-րդ հարցի 1-ին («Աշխատավարձը բավարար է»), 3-րդ («Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են») և 4-րդ («Դպրոցը բավարարում է սովորողների և նրանց ծնողների կրթական պահանջները») ենթահարցերը, որոնք թերևս բնութագրում են իր ***աշխատանքից ուսուցչի բավարարված լինելը***:

② ***Երկրորդ գործոնի*** հետ կապված են 7-րդ («Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը») և 10-րդ հարցերը («Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները»), 9-րդ հարցի 2-րդ ենթահարցը («Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ»), որոնք կարող են բնութագրել աշակերտներից ուսուցչի ակնկալած գիտելիքների ընդհանուր մակարդակը: Այս գործոնը համառոտ անվանենք ***«ակնկալիքներ»***:

③ ***Երրորդ գործոնի հետ*** սերտորեն կապված են 3-րդ հարցի 2-րդ ենթահարցը («Հոսքը»), 6-րդ («Տրամադրված շաբաթական դասաժամերի թիվը») և 8-րդ («Ակնկալվող լրացուցիչ դասաժամերի թիվը») հարցերը, որոնք բնութագրում են ըստ հոսքերի տրամադրված շաբաթական ժամաքանակի կարևորությունը: Երրորդ գործոնը համառոտ անվանենք ***«ժամաքանակ»***:

④ ***Չորրորդ գործոնը*** ներկայացված է 2-րդ հարցով («Ձեր դասավանդած առարկան») և 3-րդ հարցի 3-րդ ենթահարցով («Աշակերտների թիվը»), որոնք միասին կարող են բնութագրել առարկայի դասավանդման արդյունավետության կախվածությունը դասարանում սովորող աշակերտների թվից: Չորրորդ գործոնն անվանենք ***«դասարանների խտություն»***:

Վերջին գործոնի հետ կապված՝ հիշենք, որ դասարանում սովորող աշակերտների թիվը 20-ից ավելին լինելու դեպքում հայոց լեզվի դասաժամին դասարանը բաժանվում է 2 խմբի:

Այսպիսով, վերը նշված 4 գործոններն են՝

1) ***աշխատանքից բավարարված լինելը,***
2) ***ակնկալիքները,***
3) ***ժամաքանակը,***
4) ***դասարանների խտությունը:***

Վերլուծությունը հնարավորություն է տալիս դատողություններ անելու հարցված ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա այս կամ այն չափով ազդող և նրանց կողմից կարևորած այս գործոնների կարևորության աստիճանի մասին, որը դասակարգվել է հետևյալ կերպ՝ «Կարևորություն չի տրվում», «Թույլ կարևորվածություն», «Միջին կարևորվածություն», «Խիստ կարևորվածություն»:

Աղյուսակ 12-ում ըստ կարևորվածության աստիճանի ներկայացված են հարցված ուսուցիչների կողմից կարևորված գործոնները: Ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորների վանդակները գունավորած են:

Աղյուսակ 12. Հարցված ուսուցիչների կողմից կարևորվող հիմնական գործոնները ըստ կարևորության աստիճանի

Գործոնը		Գործոնի կարևորվածության աստիճանը	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
			Ուսուցիչների տոկոսը	Աշակերտներ			Ուսուցիչների տոկոսը	Աշակերտներ		
				տոկոսը	միջին միավորը	ստանդարտ շեղումը		տոկոսը	միջին միավորը	ստանդարտ շեղումը
1	Աշխատանքից բավարարված լինելը	Կարևորություն չի տրվում	24.1	25.3	6.5	2.047	26.1	25.9	3.9	1.717
		Թույլ կարևորվածություն	23.6	30.3	6.7	1.891	21.1	18.2	4.4	1.889
		Միջին կարևորվածություն	25.9	21.9	6.5	2.020	29.5	30.6	4.3	1.974
		Խիստ կարևորվածություն	26.4	22.5	6.5	1.880	23.3	25.3	4.1	1.994
	Ընդամենը		**100**	**100**	**6.6**	**1.960**	**100**	**100**	**4.1**	**1.909**
2	Ակնկալիքները	Կարևորություն չի տրվում	30.9	30.7	6.6	1.952	17.8	13.6	4.9	2.175
		Թույլ կարևորվածություն	26.4	25.3	6.8	1.932	23.3	23.1	4.1	1.906
		Միջին կարևորվածություն	23.6	22.3	6.5	1.965	26.7	28.2	4.2	1.810
		Խիստ կարևորվածություն	19.1	21.7	6.3	1.961	32.2	35.1	3.9	1.800
	Ընդամենը		**100**	**100**	**6.6**	**1.960**	**100**	**100**	**4.1**	**1.909**
3	Ժամաքանակը	Կարևորություն չի տրվում	19.1	18.6	6.4	2.005	32.2	31.7	3.3	1.508
		Թույլ կարևորվածություն	28.2	30.1	6.8	1.881	21.1	22.1	4.0	1.801
		Միջին կարևորվածություն	26.8	24.4	6.2	1.910	22.8	19.3	4.3	1.955
		Խիստ կարևորվածություն	25.9	26.9	6.9	1.986	23.9	26.9	5.2	1.852
	Ընդամենը		**100**	**100**	**6.6**	**1.960**	**100**	**100**	**4.1**	**1.909**
4	Դասարանների խտությունը	Կարևորություն չի տրվում	45.0	54.5	6.4	1.977	0.6	1.6	2.7	1.062
		Թույլ կարևորվածություն	39.6	35.0	6.7	1.937	7.2	14.5	4.2	1.856
		Միջին կարևորվածություն	13.6	8.6	6.8	1.835	38.9	42.5	4.2	1.946
		Խիստ կարևորվածություն	1.8	1.9	7.0	2.143	53.3	41.4	4.2	1.892
	Ընդամենը		**100**	**100**	**6.6**	**1.960**	**100**	**100**	**4.1**	**1.909**

Դիագրամ 15-ում ներկայացված են հարցված ուսուցիչների կարևորած գործոնները ըստ կարևորության աստիճանի, դիագրամ 16-ում՝ այդ ուսուցիչների աշակերտների միջին արդյունքները ըստ նույն գործոնների: Յուրաքանչյուր գործոնի կարևորության աստիճանին համապատասխան ներկայացված է նաև այն կարևորած ուսուցիչների տոկոսը:

Դիագրամ 15



Դիագրամ 16



Աղյուսակ 12-ից և դիագրամ 15-ից երևում է, որ առաջին երկու գործոնների կարևորության աստիճանը հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների դեպքում գրեթե նույն կարգի է, իսկ 3-րդ և 4-րդ գործոնների դեպքում կան որոշակի տարբերություններ, որոնք ավելի ցայտուն են արտահայտված 4-րդ գործոնի՝ դասարանների խտության դեպքում:

Դասարանների խտության գործոնը հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչները միանգամայն տարբեր չափով են կարևորում: Դիագրամ 15-ում հստակ երևում է, որ

հայոց լեզվի ուսուցիչների 45%-ը այդ գործոնը չի կարևորում, 39.6%-ը քիչ է կարևորում, 13.6%-ը կարևորում է միջին չափով, և միայն 1.8%-ն է խիստ կարևորում:

Հակառակ պատկերն է հանրահաշվի ուսուցիչների դեպքում: Նրանց 53.3%-ը խիստ կարևորում է դասարանների խտության գործոնը, 38.9%-ը կարևորում է միջին չափով, 7.2%-ը քիչ է կարևորում, և միայն 0.6%-ը չի կարևորում:

Դիագրամ 16-ից երևում է, որ հարցման մասնակից ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորները, անկախ այն բանից, որ հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչները տարբեր չափով են կարևորում դասարանների խտության գործոնը, հիմնականում մոտ են համապատասխան առարկայի միջին միավորին: Այդ գործոնի ազդեցությունն ավելի մանրամասն ցույց է տալիս դիագրամ 17-ը:

Դիագրամ 17



Դիագրամ 17-ից երևում է, որ մինչև 10 աշակերտ ունեցող դասարաններում և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից դիտարկվում են առավելապես ընդհանուր միջին միավորին գերազանցող միջին միավորներ: Աշակերտների թվին միջին և խիստ կարևորություն տվող հանրահաշվի ուսուցիչների՝ 25-ից ավելի աշակերտ ունեցող դասարաններում ընդհանուր միջին միավորից բարձր միջին արդյունքներ են դիտարկվում (5.6 և 5.2): Այդ ուսուցիչները դասավանդում են առավելապես բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում, որոնցում սովորող աշակերտների պատրաստվածության մակարդակն ավելի բարձր է, քան մյուս հոսքերում:

Առարկայի դասավանդման համար ***շաբաթական հատկացված ժամաքանակի*** հետ կապված՝ դիտարկված գործոնների կարևորության չափին հետևենք ըստ հոսքերի:

Հայոց լեզվի ուսուցիչների դեպքում բնագիտական, հումանիտար և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում դասավանդողների ավելի քան 46%-ը խիստ

կարևորում է աշխատանքից բավարարված լինելու գործոնը: Վերջինս շատ կարևոր է նաև ընդհանուր հոսքի ուսուցիչների 30.4%-ի և տնտեսագիտական հոսքի ուսուցիչների 59.6%-ի համար:

Ակնկալիքների գործոնը մեծ կարևորություն ունի բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հայոց լեզու դասավանդողների 44-47%-ի, հումանիտար և ընդհանուր հոսքերում դասավանդողների 39%-ի համար:

Ժամաքանակի գործոնը կարևոր է տնտեսագիտական հոսքում դասավանդող հայոց լեզվի ուսուցիչների 98%-ի, ֆիզիկամաթեմատիկական հոսքի բոլոր ուսուցիչների, ընդհանուր հոսքի ուսուցիչների 57%-ի, հումանիտար հոսքի ուսուցիչների 42%-ի համար: Բնագիտական հոսքի ուսուցիչների 95%-ը այն քիչ է կարևորում, կամ ընդհանրապես չի կարևորում:

Դասարանների խտության գործոնին մեծ կարևորություն է տալիս բնագիտական և հումանիտար հոսքերում հայոց լեզու դասավանդող ուսուցիչների շուրջ 20%-ը, ընդհանուր և տնտեսագիտական հոսքերում դասավանդողների 9%-ը, իսկ ֆիզիկամաթեմատիկական հոսքի ուսուցիչների մի մասը քիչ է կարևորում այս գործոնը, մի մասն էլ չի կարևորում:

Հանրահաշվի ուսուցիչների դեպքում աշխատանքից բավարարված լինելու գործոնը մեծապես կարևորում է բնագիտական հոսքում դասավանդողների 41.1%-ը, հումանիտար, ընդհանուր և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում դասավանդողների 50-57%-ը և տնտեսագիտական հոսքի ուսուցիչների 65%-ը:

Ակնկալիքների գործոնը կարևորում է ֆիզիկամաթեմատիկական հոսքում հանրահաշիվ դասավանդողների 21.1%-ը, հումանիտար, ընդհանուր և տնտեսագիտական հոսքերում դասավանդողների 63-66.2%-ը և բնագիտական հոսքի ուսուցիչների 71.1%-ը:

Ժամաքանակի գործոնը շատ կարևոր է տնտեսագիտական հոսքում հանրահաշիվ դասավանդող գրեթե բոլոր ուսուցիչների, ֆիզիկամաթեմատիկական հոսքի բոլոր ուսուցիչների, հումանիտար, ընդհանուր և բնագիտական հոսքերի ուսուցիչների 76.3-89.3%-ի համար:

Դասարանների խտության գործոնը մեծ կարևորություն ունի բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հանրահաշիվ դասավանդող բոլոր ուսուցիչների, տնտեսագիտական հոսքի ուսուցիչների 82.4%-ի, հումանիտար հոսքի ուսուցիչների 78.6%-ի և ընդհանուր հոսքի ուսուցիչների 66.6%-ի համար:

Հետևելով վերը շարադրվածին՝ կարելի է եզրակացնել, որ 3-րդ և 4-րդ գործոնները շատ ավելի կարևոր են մաթեմատիկայի, քան հայոց լեզվի ուսուցիչների համար: Ընդ որում, 3-րդ գործոնը շատ կարևոր է մաթեմատիկայի ուսուցիչների մեծ մասի համար, իսկ հայոց լեզվի ուսուցիչների դեպքում այն խիստ կարևորվում է տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հայոց լեզու դասավանդող գրեթե բոլոր

ուսուցիչների, ընդհանուր և հումանիտար հոսքերում դասավանդողների շուրջ 50%-ի կողմից:

Դասարանների խտության գործոնը խիստ կարևոր է բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հանրահաշիվ դասավանդող բոլոր ուսուցիչների, ինչպես նաև մյուս հոսքերում դասավանդողներից 66.6-82.4%-ի համար: Հայոց լեզվի ուսուցիչների դեպքում տոկոսները շատ ցածր են: Դա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ դասարանի աշակերտների թիվը 20-ից ավելին լինելու դեպքում հայոց լեզվի դասաժամին դասարանը բաժանվում է 2 խմբի, և, ըստ էության, հայոց լեզվի ուսուցիչների դեպքում 4-րդ գործոնը գրեթե չի գործում:

4. Մի քանի հարցերի պատասխանների միջև դիտարկված կապերը: Կանխատեսում

Այս բաժնում առանձին անդրադարձ է կատարվել առարկայի դասավանդման համար տրամադրված և ակնկալվող շաբաթական ժամաքանակին վերաբերող հարցերի միջև, ակնկալվող ժամաքանակի, ուսուցիչների աշխատանքային ստաժի և հոսքի միջև, նախորդ տարվա համեմատությամբ ուսման մակարդակի փոփոխությանը և նախորդ տարում ակնկալիքների արդարացմանը վերաբերող հարցերի միջև դիտարկված կապերին: Առարկայի դասավանդման համար տրամադրված շաբաթական ժամաքանակի հետ կապված՝ կատարվել է աշակերտների առաջադիմության ***վիճակագրական կանխատեսում***:

Միմյանց կապելով ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա ազդող 3-րդ գործոնի տակ խմբավորված ***«Շաբաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում Ձեր դասավանդած առարկայի ուսուցմանը»*** (հարցաթերթիկի 6-րդ հարց) և ***«Լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ քանի՞ դասաժամի անհրաժեշտություն եք զգում»*** (8-րդ հարց) հարցերի պատասխանները՝ ստացվել է հետևյալ պատկերը:

Այն դեպքում, երբ ուսուցչի հարցաթերթիկի 6-րդ հարցին («Շաբաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում Ձեր դասավանդած առարկայի ուսուցմանը»), ***հայոց լեզվի*** 220 ուսուցիչների 10.9%-ը պատասխանել է 2, 9.1%-ը՝ 3, 13.6%-ը՝ 4, 12.7%-ը՝ 5, 15%-ը՝ 6, 15.9%-ը՝ 7, 5.5%-ը՝ 8 ժամ և 17.3%-ը որևէ պատասխան չի նշել, հայոց լեզվի արտաքին գնահատման միջին միավորից բարձր միջին միավորներ դիտարկվել են հայոց լեզուն շաբաթական 3 և ավելի դասաժամով դասավանդող ուսուցիչների աշակերտների մոտ: Այն ուսուցիչները, որոնք գտնում են, որ հատկացված շաբաթական դասաժամերի ավելացման անհրաժեշտություն չկա, կազմում են հայոց լեզվի ուսուցիչների 61.4%-ը, 10%-ը նշել է, որ կա ևս 1 ժամի անհրաժեշտություն, 18.2%-ը՝ 2, 10.4%-ը՝ 3-6 ժամի:

Այն դեպքում, երբ վերոհիշյալ հարցին ***հանրահաշվի*** 180 ուսուցիչների 2.8%-ը պատասխանել է 2, 29.4%-ը՝ 3, 8.3%-ը՝ 4, 12.8%-ը՝ 5, 0.6 %-ը՝ 6, 1.1%-ը՝ 7, 27.2%-ը՝ 8, 5%-ը՝ 9 ժամ և 12.8%-ը որևէ պատասխան չի նշել, հանրահաշվի արտաքին գնահատման միջին միավորին գերազանցող միջին միավորներ են հավաքել առավելապես հանրահաշիվը շաբաթական 5 և ավելի դասաժամով դասավանդող և լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չտեսնող ուսուցիչների աշակերտները: Հանրահաշվի այն ուսուցիչները, ովքեր գտնում են, որ հատկացված դասաժամերի ավելացման անհրաժեշտություն չկա, կազմում են հարցված ուսուցիչների 62.8%-ը: Հարցվածների 0.6%-ը նշել է, որ ցանկալի է ևս 1 ժամով ավելացումը, 26.7%-ը՝ 2, 6.1%-ը՝ 3 և 3.8%-ը՝ 4 կամ 5 ժամով: Լրացուցիչ դասաժամերի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչների աշակերտների միջին միավորները հիմնականում ցածր են ընդհանուր միջին միավորից (4.1-ից): Այս ուսուցիչներից միայն 3.3%-ի աշակերտներն են ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորներ հավաքել, ընդ որում, նշանակալի բարձր է նրանցից 2.2%-ի աշակերտների միջին միավորը (հումանիտար, ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտական հոսքեր):

Դիագրամ 18-ում ներկայացված է հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների թիվը ըստ շաբաթական հատկացված և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի: Ուղղաձիգ դասավորված յուրաքանչյուր ժամաքանակի համար գույներով ցույց է տրված ակնկալվող լրացուցիչ ժամաքանակը: Յուրաքանչյուր գույնի վրա ներկայացված է ակնկալվող տվյալ ժամաքանակը նշած ուսուցիչների թիվը: Օրինակ, շաբաթական 3 դասաժամով հանրահաշիվ դասավանդող ուսուցիչներից 7-ը հատկացված ժամաքանակը բավարար է համարում և դրա ավելացում չի ակնկալում, 32-ը նշել է, որ ակնկալում է 2 ժամով ավելացում, 10-ը՝ 3 ժամով, 4-ը՝ 4 և ավելի ժամով:

Դիագրամ 18



Դիագրամում հստակ երևում է, որ ուսուցիչների մեծ մասը լրացուցիչ դասաժամի կարիք չունի: Նրանցից առավել աչքի են ընկնում շաբաթական 5, 8 և 9 ժամով հանրահաշիվ դասավանդողները (համապատասխանաբար՝ 23 (հանրահաշվի

ուսուցիչների 12.8%-ը), 47 (26.1%) և 9 (5%) ուսուցիչ): Շաբաթական 3 ժամով հանրահաշիվ դասավանդող 32 ուսուցիչ (հանրահաշվի ուսուցիչների 17.8%-ը) ճիշտ է համարում շաբաթական ժամաքանակը ևս 2 ժամով ավելացնելը:

Դիագրամ 19-ում ներկայացված են հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատումից աշակերտների հավաքած միջին միավորները ըստ հատկացված շաբաթական և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի: Հորիզոնական շարքով տրված է հատկացված ժամաքանակը, որի համար գունավոր սյուներով տրված է տվյալ ժամաքանակով դասավանդողների ակնկալած լրացուցիչ ժամաքանակը: Յուրաքանչյուր սյան վրա ներկայացված է ակնկալվող տվյալ ժամաքանակը նշած ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորը:

Դիագրամ 19



Դիագրամ 20-ում ներկայացված է ուսուցիչների թիվը ըստ հոսքերի և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի: Վերջինս ներկայացված է գույներով, որոնցից յուրաքանչյուրի վրա նշված է ուսուցիչների թիվը:

Դիագրամ 20



Դիագրամ 20-ից երևում է, որ շաբաթական ժամաքանակի ավելացում ակնկալող գրեթե բոլոր ուսուցիչները (158ը՝ հարցվածների 39.5%-ը) երկու առարկայի դեպքում էլ դասավանդում են հումանիտար հոսքում, և նրանց մեծ մասը (74-ը՝ այդ հոսքում դասավանդողների 46.8%-ը) գտնում է, որ լավագույն արդյունքի հասնելու համար պետք է ավելացնել ևս 2 ժամ:

Դիագրամ 21-ում ներկայացված են միջին միավորները ըստ հոսքերի և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի:

Դիագրամ 21



Դիագրամ 21-ից երևում է, որ անկախ ակնկալվող ժամաքանակից՝ միայն հումանիտար հոսքում է, որ հանրահաշվի միջին միավորները շատ ցածր են ընդհանուր միջին միավորից:

Վիճակագրական կանխատեսում: Շաբաթական ժամաքանակի հետ կապված՝ կատարվել է առաջադիմության ***վիճակագրական կանխատեսում***, ըստ որի, բոլոր հոսքերում հարցված ուսուցիչների նշած առկա ***հայոց լեզվի*** շաբաթական դասաժամերը 1 ժամով ավելացնելու դեպքում արտաքին գնահատման միջին միավորը գրեթե չի փոխվի: Հիշենք, որ հայոց լեզվի ուսուցիչների 61.4%-ը լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ դասաժամի ավելացման անհրաժեշտություն չի տեսնում, այսինքն այդ ուսուցիչներին բավարարում է հատկացված ժամաքանակը: Արտաքին գնահատումից այդ ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորը հավասար է ընդհանուր միջինին (6.6): Ըստ կանխատեսման, եթե նույնիսկ բոլոր հարցվածներին հնարավորություն տրվի հայոց լեզուն դասավանդելու իրենց իսկ ակնկալած շաբաթական ժամաքանակով, մնացած պայմանները թողնելով անփոփոխ, արտաքին գնահատմանը մասնակցած նրանց աշակերտների ամբողջ համակազմի միջին միավորը կավելանա աննշան չափով: Փոփոխությունն ավելի նկատելի կլինի միայն հումանիտար,

բնագիտական և ընդհանուր հոսքերում, որոնց աշակերտների արտաքին գնահատման կանխատեսված միջին միավորը նախկինից բարձր կլինի 0.3-ով:

Վիճակագրական կանխատեսումը ցույց է տալիս, որ եթե մաթեմատիկայի բոլոր հարցված ուսուցիչներին հնարավորություն տրվի հանրահաշիվը դասավանդելու իրենց ակնկալած շաբաթական ժամաքանակով, ապա բնագիտական հոսքում հանրահաշվի արտաքին գնահատման միջին միավորը կավելանա 0.3-ով, հումանիտար հոսքում՝ 0.2-ով, ընդհանուր հոսքում՝ 0.4-ով: Իսկ բոլոր հոսքերում առկա ***հանրահաշվի*** շաբաթական դասաժամերը 1-ական ժամով ավելացնելու դեպքում կբարձրանա միայն հումանիտար հոսքի աշակերտների միջին միավորը (0.6-ով): Հետևաբար, քանի որ լրացուցիչ դասաժամի ավելացման անհրաժեշտություն են տեսնում առավելապես հումանիտար հոսքում հանրահաշիվ դասավանդող ուսուցիչները, և կանխատեսումն էլ ցույց է տալիս, որ ժամաքանակը ևս 1 ժամով ավելացնելը կբարելավի այդ հոսքում սովորողների առաջադիմությունը, ուստի ենթադրվում է, որ կարելի է հնարավորության սահմաններում կա՛մ ավելացնել այդ հոսքին հատկացված մաթեմատիկայի շաբաթական ժամաքանակը, կա՛մ բեռնաթափել հումանիտար հոսքի համար նախատեսված «Հանրահաշիվ» առարկայի ծրագիրը:

*** *** ***

Դիտարկենք լավագույն արդյունքի հասնելու համար ***լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չտեսնող ուսուցիչների մանկավարժական ստաժը***:

Մանկավարժական ստաժի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են աղյուսակ 13-ում: Ուսուցիչների տոկոսը հաշվարկված է լրացուցիչ դասաժամ չպահանջողների ընդհանուր թվից (248-ից), իսկ հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչներինը՝ ստաժի տվյալ խմբում լրացուցիչ դասաժամ չպահանջողների թվից:

Աղյուսակ 13. Ժամաքանակի ավելացման կարիք չունեցող ուսուցիչների տոկոսը ըստ մանկավարժական ստաժի

Մանկավարժական ստաժը (տարի)	Բոլոր հարցվածները	Հայոց լեզվի ուսուցիչներ	Հանրահաշվի ուսուցիչներ
0-5	22.2	61.8	38.2
6-10	7.3	50.0	50.0
11-15	8.9	72.7	27.3
16-20	13.7	50.0	50.0
21-25	12.9	40.6	59.4
26-30	16.5	58.5	41.5
31-35	8.5	52.4	47.6
36-40	7.3	44.4	55.6
41 և ավելի	2.8	42.9	57.1

Հարցված 400 ուսուցիչների 62%-ը լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չի տեսնում: Նրանց մեջ մեծ թիվ են կազմում մինչև 5 և 26-30 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչները՝ հայոց լեզվի ուսուցիչների առավելությամբ:

Լրացուցիչ դասաժամ չպահանջողների 34.3%-ը դասավանդում է բնագիտական հոսքում, 31%-ը՝ տնտեսագիտականում: Բնագիտական հոսքում դասավանդողների 45.9%-ը հայոց լեզվի ուսուցիչներ են, 54.1%-ը՝ հանրահաշվի, տնտեսագիտական հոսքում համապատասխանաբար՝ 57.1%-ը և 42.8%-ը:

Մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ***հայոց լեզվի*** ուսուցիչներից շատերը (բացի Արագածոտնի և Վայոց ձորի մարզերից, որոնց ուսուցիչների ստաժը 10 տարուց ավելի է), ինչպես նաև Լոռու, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերի 26-30 տարվա ստաժ ունեցող ուսուցիչների մեծ մասը համարում են, որ հատկացված շաբաթական ժամաքանակը բավարար է լավագույն արդյունքի հասնելու համար: Այդ կարծիքին են նաև Երևանի ուսուցիչներից շատերը, Շիրակի մարզի 11-25 և 31-40 տարի ստաժ ունեցող, Լոռու մարզի 21-30, Արագածոտնի 11-15 և 26-30, Սյունիքի 11-15, 21-30 և 36-40, Արարատի 16-20 և 31-35, Գեղարքունիքի 36-40, Արմավիրի և Կոտայքի 11-15, Տավուշի 16-20, 26-30 և 36-40 տարվա ստաժով բոլոր ուսուցիչները:

Մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ***հանրահաշվի*** ուսուցիչների (բացի Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզերից, որոնց ուսուցիչների ստաժը 5 տարուց ավելի է), ինչպես նաև Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի և Երևանի 21-25 տարվա ստաժ ունեցող ուսուցիչների մեծ մասը համարում են, որ հատկացված շաբաթական ժամաքանակը բավարար է լավագույն արդյունքի հասնելու համար: Այդպես են կարծում նաև Երևանի 6-20 և 31-35 տարի ստաժ ունեցող, Շիրակի մարզի 26-35, Արագածոտնի 16-20 և 31-35, Արարատի 6-10, Արմավիրի 16-20 և 26-30 Լոռու մարզի 16-20 և 36-40, Սյունիքի 16-25, Գեղարքունիքի 36-ից ավելի, Կոտայքի 21-25, Տավուշի 11-20 և 41-ից ավելի տարվա ստաժ ունեցող բոլոր հարցվածները:

Դիտարկենք նաև լրացուցիչ ***2 դասաժամի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչների մանկավարժական ստաժը***:

Հայոց լեզու դասավանդողներից լրացուցիչ 2 ժամի կարիք ունի հիմնականում մինչև 5 տարվա, 16-20 տարվա և 26-35 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների մի մասը: Հինգ տարվա ստաժ ունեցող ուսուցիչները Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերից և Երևանից են, 16-20 տարվանը՝ Արագածոտնի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերից և Երևանից, 26-35 տարվանը՝ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արմավիրի, Տավուշի մարզերից և Երևանից: Լրացուցիչ 2 դասաժամի կարիք ունի նաև 6-15, 21-25 և 41 տարուց ավելի մանկավարժական ստաժ ունեցող երևանցի ուսուցիչների, ինչպես նաև Վայոց ձորի մարզի 11-15, Կոտայքի մարզի 21-25 և

Արագածոտնի մարզի 36-40 տարվա ստաժ ունեցողների մի մասը: Շիրակի, Արագածոտնի, Տավուշի և Կոտայքի մարզերից հայոց լեզվի լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ դասաժամ ակնկալող ուսուցիչները 2-ից ավելի ժամով ավելացման անհրաժեշտություն չեն տեսնում:

Հանրահաշիվ դասավանդող ուսուցիչներից լրացուցիչ 2 ժամի կարիք ունի մինչև 5 տարվա (Երևան և Կոտայքի մարզ), 16-20 տարվա (Շիրակի և Կոտայքի մարզեր) և 21-25 տարվա (Շիրակի և Արագածոտնի մարզեր) մանկավարժական ստաժ ունեցողների մի մասը: Լոռու, Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի, Արմավիրի, Տավուշի և Վայոց ձորի մարզերից հանրահաշվի դասավանդման համար լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչներն ակնկալում են ևս երեք կամ ավելի ժամ: Լոռու մարզի այդ ուսուցիչներն ունեն մինչև 10 և 26-30 տարվա, Սյունիքինը՝ 31 և ավելի, Արարատինը և Տավուշինը՝ 21-30, Գեղարքունիքինը՝ մինչև 5 և 21-30, Արմավիրինը՝ մինչև 5 և 21-25, Վայոց ձորինը՝ 16-20 տարվա մանկավարժական ստաժ:

*** *** ***

Հետևենք հարցաթերթիկի ***7-րդ («Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը»), 9-2-րդ («Որքանո՞վ եք համամիտ «Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ» մտքի հետ») և 10-րդ («Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները») հարցերի*** միջև դիտարկվող կապերին: Հիշենք, որ այս հարցերը խմբավորվել և բնութագրում են ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա ազդող 2-րդ գործոնը:

Հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնք համարում են, որ նախորդ տարվա համեմատությամբ բավականին բարելավվել է իրենց դասավանդած 11-րդ դասարանների ուսման մակարդակը և համարում են, որ իրենց աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ, 10-րդ հարցի պատասխաններից ընտրել են միայն «Հիմնականում արդարացրել են» և «Մասամբ են արդարացրել» պատասխանները: Հայոց լեզվի արտաքին գնահատումից այս ուսուցիչների աշակերտներից «հիմնականում արդարացրածների» հավաքած միջին միավորը 0.4-ով գերազանցում է ընդհանուր միջինին, իսկ «մասամբ արդարացրածներինը» 0.1-ով զիջում է: «Քիչ է բարելավվել» պատասխանն ընտրած ուսուցիչների 74%-ը համարում է, որ նախորդ ուսումնական տարում աշակերտները չեն կարողացել արդարացնել իրենց ակնկալիքները: Ընդ որում, այդ ուսուցիչների գերակշիռ մասը համարում է, որ աշխատանքը միանգամայն կամ մասամբ է հետաքրքիր և տարաբնույթ: Մինչդեռ այդ ուսուցիչների աշակերտների միջին միավորը 0.5-ով ցածր է ընդհանուր միջինից: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ուսման մակարդակի փոփոխություն չնկատած գրեթե բոլոր ուսուցիչները, որոնք համարում են, որ հետաքրքիր և տարաբնույթ է, նշել են, որ նախորդ ուսումնական տարում 2015-16 ուսումնական տարվա 11-րդ դասարաններում սովորող աշակերտները մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները: Հայոց լեզվի արտաքին

գնահատումից այդ ուսուցիչների աշակերտները հավաքել են ընդհանուր միջինից 0.2-0.3-ով ցածր միջին միավորներ: Ուսման մակարդակի նվազում նկատած ուսուցիչները, ովքեր մեծամասամբ համամիտ են, որ աշխատանքը հետաքրքիր և տարաբնույթ է, համարում են, որ նախորդ ուսումնական տարում աշակերտները մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները: Այդ ուսուցիչների աշակերտները նույնպես արտաքին գնահատումից հավաքել են ընդհանուր միջինից ցածր միջին միավոր:

Հանրահաշվի ուսուցիչների դեպքում նույնպես 7-րդ, 10-րդ հարցերի և 9-րդ հարցի 2-րդ ենթահարցի պատասխանների միջև դիտարկվում են մոտավորապես նույն կարգի կապեր, ինչ որ հայոց լեզվի ուսուցիչների դեպքում, սակայն միջին միավորների առումով կա որոշակի տարբերություն: 7-րդ հարցի «Բավականին բարելավվել է» և «Քիչ է բարելավվել» պատասխանն ընտրած ուսուցիչները համարում են, որ աշխատանքը այս կամ այն չափով հետաքրքիր և տարաբնույթ է և նշել են, որ աշակերտները նախորդ ուսումնական տարում մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները (հարցվածների 56%-ը): Իրենց աշակերտների միջին արդյունքների առումով նրանք գտնվում են ընդհանուր միջինին հավասար կամ բարձր դիրքում: 10-րդ հարցին պատասխանած և նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ուսման մակարդակի փոփոխություն չնկատած ուսուցիչների (հարցվածների 19%-ը) աշակերտների միջին արդյունքները ցածր են ընդհանուր միջին միավորից: Ի դեպ, այդ ուսուցիչների 74%-ն ընտրել է 10-րդ հարցի «Մասամբ են արդարացրել» պատասխանը:

Ամփոփում

2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակում հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով անցկացված հարցմանը մասնակցել է հանրակրթական 57 ուսումնական հաստատություններում հայոց լեզու դասավանդող 220 և 53 հաստատություններում հանրահաշիվ դասավանդող 180 ուսուցիչ: Հայոց լեզվի ուսուցիչների դասավանդած 11-րդ դասարաններում այդ առարկայի արտաքին գնահատմանը մասնակցել է 3239 աշակերտ, հանրահաշվի դեպքում՝ 3062-ը:

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը դասավանդում է քաղաքային հանրակրթական ուսումնական հաստատություններում (հիմնականում ավագ դպրոցների, ինչպես նաև վարժարանների բնագիտական, հումանիտար, ընդհանուր, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում):

Հայոց լեզվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորը եղել է 6.6, ներքին գնահատման միջինը՝ 6.8, հանրահաշվինը, համապատասխանաբար՝ 4.1 և 6.5:

Հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորներից բարձր միջին արդյունքներով ՀՀ վարչատարածքային միավորների հանրակրթական ուսումնական հաստատություններից աչքի են ընկնում Երևանում և Շիրակի մարզում գործողները, ուսումնական հաստատությունների տեսակներից՝ վարժարանները, հոսքերից՝ ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտական հոսքերը:

Ուսուցչի հարցաթերթիկի գործոնային վերլուծությունից կարելի է 2 հետևություն անել՝

1) հանրահաշվի դասավանդման համար տրամադրված շաբաթական ժամաքանակի ավելացման անհարաժեշտություն կա հանրակրթական ուսումնական հաստատությունների հումանիտար հոսքում,
2) դասարանների մեծ խտությունը խոչընդոտում է հանրահաշվի արդյունավետ դասավանդմանը:

Հարցման արդյունքները հավաստում են, որ 11-րդ դասարանում հայոց լեզվի և հանրահաշվի դասավանդման համար ըստ հոսքերի տրամադրված շաբաթական ***ժամաքանակը*** ըստ հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծ մասի հիմնականում բավարարում է դասավանդման գործընթացին: Նրանցից ֆիզիկամաթեմատիկական և ընդհանուր հոսքերում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդողների, բնագիտական և տնտեսագիտական հոսքերի հանրահաշվի և հումանիտար հոսքի հայոց լեզվի ուսուցիչների աշակերտների միջին միավորները գերազանցում են արտաքին գնահատման համապատասխան ընդհանուր միջին միավորին:

Քանի որ հարցման մասնակիցներից լրացուցիչ դասաժամ ակնկալող ուսուցիչները հիմնականում հումանիտար հոսքում հանրահաշիվ դասավանդողներն են, իսկ հանրահաշվի արտաքին գնահատումից նրանց աշակերտների միջին արդյունքներն ամենացածրն են, ինչպես նաև հումանիտար հոսքում հանրահաշվի դասավանդման համար շաբաթական հատկացված ժամաքանակի 1 դասաժամով ավելացումը տեսականորեն կանխատեսում է միջին միավորի բարձրացում (0.6 միավորով), ըստ այդմ՝ առաջարկվում է միայն հումանիտար հոսքում մեկ դասաժամով ավելացնել հանրահաշվի դասավանդման համար հատկացվող շաբաթական դասաժամերի թիվը կամ բեռնաթափել այդ հոսքի համար նախատեսված առարկայի ծրագիրը:

Դասարանների խտության գործոնը խիստ կարևորում են հանրահաշվի ուսուցիչները, հատկապես հումանիտար հոսքում դասավանդողները: Վերլուծությունը հավաստում է, որ հումանիտար հոսքի 20-ից ավելի աշակերտ ունեցող դասարաններում սովորողների միջին արդյունքներն ամենացածրն են: Ըստ այդմ՝ առաջարկվում է փորձել մաթեմատիկայի դասաժամերին դասարանում 20-ից ավելի աշակերտ ունենալու դեպքում նրանց բաժանել 2 խմբի, հետևել նրանց առաջադիմությանը և լավ արդյունքի դեպքում կիրառել հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում: Որպես հիմնավորում կարելի է ընդունել այն, որ թեև ՀՀ վարչատարածքային միավորների կտրվածքով դիտարկումը ցույց է տալիս, որ Երևանում և Շիրակի մարզում դիտարկված

դասարաններում աշակերտների թիվը գրեթե չի ազդում առաջադիմության վրա, այնուամենայնիվ, մյուս մարզերում հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորներ դիտարկվում են առավելապես մինչև 20 աշակերտ ունեցող դասարաններում:

Օգտագործված աղբյուրներ

1. 2015 թ. հոկտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդող ուսուցիչների շրջանում անցկացված հարցման էլեկտրոնային տվյալների բազաներ:
2. Նույն ժամանակահատվածում և նույն ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում հայոց լեզվից և հանրահաշվից անցկացված արտաքին գնահատման էլեկտրոնային տվյալների բազաներ:

Հավելված

Ուսուցչի հարցաթերթիկ

1. Ձեր մարզը, դպրոցը:
2. Ձեր դասավանդած առարկան:
3. Ստորև տրված աղյուսակում գրել 11-րդ դասարանում Ձեր դասավանդած՝
   ա) դասարանը,
   բ) հոսքը,
   գ) աշակերտների թիվը:
4. Ձեր սեռը:
5. Մանկավարժական ստաժը:
6. Շաբաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում Ձեր դասավանդած առարկայի ուսուցմանը (տարբեր հոսքերում դասավանդելու պարագայում նշել յուրաքանչյուր հոսքի դասաժամերի քանակը):
7. Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը:

   Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝
   - բավականին բարելավվել է,
   - քիչ է բարելավվել,
   - չի փոխվել,
   - նվազել է:
8. Լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ քանի՞ դասաժամի անհրաժեշտություն եք զգում:
9. Որքանո՞վ եք համամիտ ստորև նշված մտքերի հետ:
   1. Աշխատավարձը բավարար է:
   2. Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ:
   3. Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են:
   4. Դպրոցը բավարարում է սովորողների և նրանց ծնողների կրթական պահանջները:

   Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝
   - միանգամայն համամիտ եմ,
   - գրեթե համամիտ եմ,
   - շատ քիչ եմ համամիտ,
   - բոլորովին համամիտ չեմ:

10. Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները:

Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝

- Հիմնականում արդարացրել են:
- Մասամբ են արդարացրել:
- Չեն կարողացել արդարացնել:
- Դժվարանում եմ պատասխանել: